«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԲԱԶԱՅԻՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2024

ՆԱԽԱԲԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջի (այսուհետ՝ քոլեջ կամ հաստատություն) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջի ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ....4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ....5

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ....11

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ....11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ....11

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....14

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ....14

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ....16

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ....21

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ....28

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ....32

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ....37

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ....39

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ....42

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ....45

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ....47

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....52

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....53

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ....53

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ....54

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ....57

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....60

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ....61

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....62

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Այս բաժնի նպատակն է ծանոթացնել ընթերցողին ՄՈՒՀ-ի գործունեության համատեքստին՝ տրամադրելով տեղեկատվություն գործունեության միջավայրի, կրթական ծրագրերի և գնահատման գործընթացը պայմանավորող այլ առանցքային ուղղությունների մասին: Չափանիշներում ներկայացվող փաստերն ու դատողությունները կառուցվել են՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության արտաքին համատեքստը և ներքին միջավայրը:

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը

Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանը հիմնադրվել է 1990 թվականին, իսկ համալսարանին կից բազային քոլեջը գործունեությունը մեկնարկել է 2010 թվականից:

Քոլեջը գտնվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլում, որը մեկնարկել է 2023 թվականի դեկտեմբերի 25-ին ներկայացված դիմում-հայտի հիման վրա:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Քոլեջն իր գործունեությունը ծավալում է Երևան քաղաքում:

Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է իրականացնում առկա ուսուցմամբ: Հիմնադրման պահից մինչ 2022-2023 ուստարին, քոլեջում իրականացվել է 4 մասնագիտական կրթական ծրագրերի ուսուցում՝ «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Հաշվապահական հաշվառում», «Սպասարկման կազմակերպում», «Զբոսաշրջություն», «Դիզայն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտություններով: «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Դիզայն» կրթական ծրագրերը ներդրվել են 2023-2024 ուստարվանից:

Ներդրված կրթական ծրագրերի իրականացումը վերջին երկու տարիներին նպաստել է ուսանողների թվաքանակի աճին. մինչ նոր կրթական ծրագրերի մեկնարկը քոլեջում կրթություն է ստացել 108 ուսանող, 2023-2024 ուստարում՝ 216 ուսանող, 2024-2025 ուստարում ուսանողների թիվը 280 է:

Քոլեջում դասախոսական կազմը 36-ն է, որոնցից 13-ը՝ համատեղությամբ: Դասավանդող կազմն ունի բարձագույն կրթություն, 8 դասախոսներ ունեն նաև գիտական աստիճան: Դասավանդողներից երկուսը հանդիսանում են Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի շրջանավարտներ:

Մինչ այժմ քոլեջն ունեցել է 158 շրջանավարտ. շրջանավարտներից 73-ը շարունակում են ուսումը բուհերում, 46-ը աշխատում են, որից 7-ը իրենց մասնագիտությամբ: Զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն դիրքերում են «Զբոսաշրջություն» և «Սպասարկման կազմակերպում» մասնագիտությունները:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջն առաջին անգամ է ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում, ինչպես նաև գտնվում է որակի ապահովման մշակույթի ձևավորման փուլում: Քոլեջը միջին մասնագիտական կրթական ծրագրեր է իրականացնում ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 5-րդ մակարդակին համահունչ:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել նաև, որ քոլեջի առաքելությունն է պատրաստել այնպիսի մասնագետներ, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, կարողություններով և պրակտիկ հմտություններով համարժեք կարձագանքեն առկա մարտահրավերներին, համապատասխան գործողություններով կաջակցեն ՀՀ տնտեսության զարգացմանն ու կայացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջի 2023-2028թթ. ԶՌԾ-ը մշակվել է նախորդ՝ 2018-2023թթ. ԶՌԾ -ի կատարողականի գնահատման և SWOT վերլուծության հիման վրա, յուրաքանչյուր նպատակի համար ներկայումս սահմանված են խնդիրներ, առանձնացված են նպատակների իրականացման համար անհրաժեշտ գործողություններ, իրականացման ժամկետներ, առաջընթացի գնահատման ցուցիչներ: Դրական համարելով ռազմավարական զարգացման գործընթացների բարելավմանն ուղղված քոլեջի քայլերը և դիտարկելով, որ գործընթացների պլանավորման նախնական մակարդակում քոլեջն առավելապես կենտրոնացել է փաստաթղթային կանոնակարգման վրա՝ փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է փաստաթղթերի մշակումից անցնել դրանցով նախատեսված գործընթացների ամբողջական իրականացմանը: Արդյունավետության գնահատման հստակ ցուցիչների սահմանումը, ակնկալվող որակական ու քանակական արդյունքների առանձնացումը և դրանց համահնչեցումը հաստատության բյուջեին կնպաստի քոլեջի ռազմավարական զարգացման գործընթացների արդյունավետ իրականացմանը և քոլեջի երկարաժամկետ զարգացմանը:

Անդրադառնալով քոլեջի կառավարման գործընթացներին՝ փորձագիտական խումբն արձանագրում է, որ քոլեջը քայլեր է ձեռնարկել գործընթացների կանոնակարգման, վարչարարության համակարգի բարելավման ուղղությամբ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում սահմանափակ ռեսուրսների պարագայում հաստատության կառավարչական մոտեցումը բուհի ֆինանսական ռեսուրսներից ևս ուղղելու քոլեջին կրթական ծրագրերի շարունակականության ապահովման ուղղությամբ: Այսուհանդերձ, գործունեության կայունության ապահովման համար անհրաժեշտ է ստեղծել ֆինանսական ներհոսքի կայուն մեխանիզմներ, ինչի ներուժը քոլեջն ունի լրացուցիչ դասընթացների, դրամաշնորհային ծրագրերին դիմելու միջոցով ստեղծելու ֆինանսական կայունության

ապահովման երաշխիքներ: Իր գործունեության վերաբերյալ տվյալների շարունակական հավաքագրումը, հավաստի տվյալների հիմքով կառավարչական որոշումների կայացումը կնպաստեն քոլեջի ռազմավարական նպատակների լիարժեք իրագործմանը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև քոլեջի ռեսուրսներին համահունչ գործընթացների պլանավորումը չափելի արդյունքներ սահմանելու ու իրատեսական պլանավորում իրականացնելու համար:

Քոլեջը տեսանելի քայլեր է ձեռնարկել որակի ապահովման համակարգի ներդրման ուղղությամբ՝ մշակելով համապատասխան փաստաթղթային հենք ու փորձելով ձևավորել կարիքների գնահատման մեխանիզմներ: Հաշվի առնելով քոլեջի ծավալները և որոշ պատասխանատուների կողմից մի քանի գործառույթների իրականացումը, այսուհանդերձ, քոլեջը պետք է ուշադրություն դարձնի որակի ապահովման և ռազմավարական պլանավորման ու իրագործման գործառույթների զուգահեռ իրականացման շրջանակում շահերի բախման բացառմանը: Դրական հանգամանք է, որ կարճ ժամանակում ներդրված որոշ գործիքներ արդեն իսկ տվել են իրենց արդյունքը, դրանց միջոցով վերհանվել ու լուծումներ են ստացել ռեսուրսների և ուսումնական միջավայրի որոշ կարիքներ: Որակի ապահովման համակարգի արդյունավետ գործունեությանը նպաստելու համար անհրաժեշտ է հստակեցնել որակի ներքին ապահովման համակարգից քոլեջի ակնկալիքները, կարիքների վերհանման ուղղություններն ու նպատակները, ինչը կնպաստի քոլեջի գործունեության բոլոր ուղղություններով տվյալների առկայությանն ու կառավարչական որոշումների արդյունավետության բարձրացմանը:

Անդրադառնալով քոլեջի կրթական ծրագրերի իրականացմանը՝ հարկ է նշել, որ քոլեջը, հիմք ընդունելով պետական կրթական չափորոշիչներն ու Որակավորումների ազգային շրջանակը, մշակել է իր կրթական ծրագրերը: Քոլեջը կարողացել է որոշակիորեն բարելավել կրթական ծրագրերը, ներդնել աշխատաշուկայի իրական պահանջներից եկող առաջադրանքներ: Ուսանողների մասնագիտական զարգացումն ու պատրաստվածությունն ապահովելու տեսանկյունից դրական հանգամանք է, որ քոլեջը մասնագիտական որոշ առարկաներ ներդրել է առաջին կուրսից սկսած, հանրակրթական առարկաներում ևս ուսանողներին տրվում են իրենց մասնագիտությանն առնչվող առաջադրանքներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ կարևոր է հստակեցնել ուսանողների գնահատման չափանիշները՝ հավաստիանալու, որ ստուգվել են ուսանողների համար նախատեսված բոլոր վերջնարդյունքները և մշտադիտարկելու մասնագետների պատրաստման ընթացքը: Կրթական ծրագրերի վերջնարդյունքների ապահովման համար կարևոր է իրականացնել նաև համեմատական վերլուծություն համանման կրթական ծրագրերի հետ քոլեջի ծրագրերի լավարկման նպատակով:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն ունի համապատասխան որակավորում և փորձառություն ունեցող դասախոսական կազմ, ինչը նպաստում է կրթական ծրագրերի իրականացմանը և սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը: Դասախոսական կազմի գնահատման մեխանիզմների կիրառումը նպաստել է մեթոդական կարիքների վերհանմանը, քոլեջի կողմից աջակցության ու խորհրդատվության տրամադրմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի ռեսուրսներ հատկացնելու նաև դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար: Դասախոսական կազմի

կատարելագործմանը կարող են նպաստել նաև քոլեջի ներսում իրականացվող փորձի փոխանակման միջոցառումները, որոնք կարող են տեղի ունենալ քոլեջում տարբեր փորձառություն (դասավանդման, հետազոտական գործունեության, գործնական միջավայրում աշխատելու) ունեցող դասախոսների միջև պարբերաբար ու պլանավորված երկխոսության միջոցով:

Քոլեջը շարունակաբար միջոցներ է հատկացնում իր ռեսուրսների ու ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ, ինչը նպաստում է կրթական բարենպաստ միջավայրի ձևավորմանը: Դրական հանգամանք է, որ քոլեջը կիրառում է նաև գործատու կազմակերպությունների ռեսուրսները աշխատանքային ժամանակակից գործիքներին ու սարքավորումներին ուսանողներին ծանոթացնելու համար: Ֆինանսական ռեսուրսների կառավարման տեսանկյունից քոլեջը դեռևս չի իրականացրել կրթական ծրագրերի շարունակականությունը երաշխավորող նվազագույն ռեսուրսների հաշվարկ, ինչը կարող է նպաստել կրթական ծրագրերի համար ֆինանսական պլանավորման բարելավմանը: Ֆինանսական կայունությանը կարող է նպաստել նաև դրամական մուտքերի բազմազանեցումը քոլեջի ներուժի կիրառմամբ դասընթացների իրականացման, դրամաշնորհների հայթայթման միջոցով: Հաշվի առնելով վերջին տարիներին կրթական ծրագրերի բարելավման ընթացքը, կրթական ծրագրերի ուղղություններին համահունչ դասախոսական կազմով քոլեջի համալրումը և դասավանդող կազմի կայունությունը, ռեսուրսների ու ենթակառուցվածքների առկայությունն ու գործատուների հետ համատեղ ռեսուրսների կիրառումը՝ կարելի է նշել, որ քոլեջն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհումը:

Անդրադառնալով քոլեջում ուսանողական ծառայությունների մատուցմանը՝ հարկ է նշել, որ քոլեջն ուշադրության կենտրոնում է պահում ուսանողների կարիքները, իրականացնում խորհրդատվական պարապմունքներ և լրացուցիչ դասընթացներ: Քոլեջը նախկինում չի իրականացրել շրջանավարտների տվյալների պարբերական հավաքագրում, սակայն վերջին երեք տարիներին մեկնարկած աշխատանքները լավ սկիզբ են և կարող են հիմք հանդիսանալ շրջանավարտների մասնագիտական հետագծի ուսումնասիրման և կրթական ծրագրերի հետագա մշտադիտարկման ու բարելավման համար:

Քոլեջը կարևորել է նաև հետազոտական գործունեության իրականացումը, այսուհանդերձ փորձագիտական ուսումնասիրությունները, մասնագիտական քննարկումները փաստում են, որ այս ուղղությամբ դեռևս տեսանելի արդյունքներ չկան: Ուսանողներին տրամադրվում են հետազոտական բաղադրիչ ունեցող որոշ հանձնարարականներ, այսուհանդերձ դրանք հստակ պլանավորված և արտացոլված չեն կրթական ծրագրերում, հստակ չեն դրանց իրականացման ու գնահատման չափանիշները: Ներդրված մեխանիզմները դեռևս չեն նպաստել ուսանողների և դասախոսների շրջանում հետազոտական աշխատանքների իրականացման դինամիկայի բարելավմանը: Բուհական փորձառություն ունեցող դասախոսները թեև իրականացնում են գիտական գործունեություն իրենց մասնագիտությունների շրջանակում, սակայն հետազոտությունների արդյունքները չեն փոխկապակցվում սովորողների ուսումնառությանը:

Քոլեջն ակտիվ քայլեր է իրականացնում նաև արտաքին կապերի հաստատման ուղղությամբ: Վերջին երեք տարիներին աճել է գործընկեր կազմակերպությունների ու գործատուների հետ համագործակցությունը, ինչը քոլեջին հնարավորություն է տալիս ապահովել ուսանողների պրակտիկաների ու գործնական պարապմունքների

իրականացումը: Քոլեջը որոշակի քայլեր է իրականացրել ու կապեր հաստատել որոշ միջազգային ուսումնական հաստատությունների հետ, որոնցով սահմանված աշխատանքները դեռ պլանավորման փուլում են: Փորձագիտական խումբը գտնում է, որ հաստատված կապերի միջոցով կրթական ծրագրերի համահունչության ապահովումը կնպաստի շարժունության հնարավորությունների ստեղծմանը: Միջազգայնացման խթանման կարևոր քայլերից է նաև օտար լեզուների դասընթացների իրականացումը, և այս համատեքստում քոլեջի իրականացրած դասընթացները, կրթական ծրագրերում օտար լեզուների ժամաքանակի ավելացումը դրական քայլեր են ներքին շահակիցների լեզվաիմացության բարձրացման տեսանկյունից: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջին անհրաժեշտ է շարունակել լեզվի իմացության բարձրացմանն ուղղված միջոցառումները, ինչը հիմքեր կձավորի նաև քոլեջի՝ օտարալեզու կրթական ծրագրի իրականացման համար:

Վերջին երկու տարիներին բարելավվել են նաև հաշվետվողականության մեխանիզմները, իսկ դրանց վերլուծականության ավելացումը կնպաստի խնդիրների շարունակական բացահայտմանը ու հավաստի հիմքեր կձևավորի արդյունավետ պլանավորման համար: Հաշվի առնելով քոլեջի դասավանդող կազմի ներուժն ու քոլեջի նյութատեխնիկական միջավայրը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կարող է օգտագործել այս ռեսուրսները հասարակության լայն շերտերի համար իր կրթական գործունեության շրջանակում ծառայությունների մատուցման ու գիտելիքների փոխանցման համար՝ որպես կրթական հաստատություն իրացնելով իր հասարակական պատասխանատվությունը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) ռազմավարական պլանավորման գործիքակազմի կիրառումը՝ սահմանելով քոլեջի գործունեությունն ընդգրկող համապատասխան նպատակներ և խնդիրներ,

2) ուսանողների կրթական կարիքներին համահունչ ուսումնական միջավայրի շարունակական բարելավումը,

3) մասնագիտական բարձր որակներ ունեցող դասախոսական կազմով համալրվածությունը և կայունությունը,

4) ենթակառուցվածքների ու ռեսուրսների շարունակաբար բարելավումը և գործատուների ռեսուրսների համատեղ կիրառումը,

5) հաստատության գործունեության մասին հաշվետվողականության ապահովումը ներքին և արտաքին շահակիցների համար,

6) որակի ապահովման համակարգի ներդրմանը միտված աշխատանքների իրականացումը և դրանցում շահակիցների ընդգրկումը,

7) որակի ապահովման համակարգի ազդեցությունը քոլեջում ընթացող գործընթացների կանոնակարգման ու բարելավման վրա,

8) ՀՀ-ում գործընկերների հետ համագործակցության լայն շրջանակը պրակտիկաների ու գործնական պարապմունքների իրականացման նպատակով,

9) ներքին շահակիցների՝ օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Հաստատության թույլ կողմերն են.

1) ստորաբաժանումների գործառույթների մասին տարբեր ընկալումները շահակիցների շրջանում և որոշ պատասխանատուների մեծ բեռնվածությունը,

2) հստակ տվյալների վրա կայացված կառավարչական որոշումների պակասը,

3) ՄԿԾ-ների շրջանակում փորձի փոխանակման և համեմատական վերլուծության մեխանիզմների անկատարությունը,

4) ուսանողների գնահատման պահանջների և չափանիշների անհստակությունը,

5) հետազոտական աշխատանքների խթանման մեխանիզմների պակասը և հետազոտությունների թույլ կապը ուսումնառության հետ,

6) դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար ֆինանսական հատկացումների բացակայությունը,

7) ֆինասավորման այլընտրանքային աղբյուրների պակասը և ըստ ռազմավարական ուղղությունների ֆինանսական միջոցների բաշխման անկատարությունը,

8) հասարակությանը մատուցվող ծառայությունների բացակայությունը:

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1) Շարունակաբար հավաքագրել տվյալներ քոլեջի գործունեությունն ընդգրկող ուղղությունների վերաբերյալ և դրանք դնել կառավարչական որոշումների կայացման հիմքում:

2) Քայլեր ձեռնարկել ֆինանսական մուտքերի բազմազանեցման ուղղությամբ ռազմավարական նպատակների իրականացման ու ֆինանսական կայունության ապահովման նպատակով:

3) Իրականացնել քոլեջի երկարաժամկետ ֆինանսական պլանավորում՝ համապատասխանեցնելով ֆինանսական միջոցները սահմանված ռազմավարական ուղղություններին:

4) Սահմանել քանակական ու որակական հստակ ցուցիչներ՝ վերահսկելու և գնահատելու ռազմավարական նպատակների իրականացման առաջընթացը:

5) Գնահատել ստորաբաժանումների գործառույթների բաշխման արդյունավետությունը՝ խուսափելու գործառութային կրկնություններից ու շահերի բախումից:

Որակավորումների արժանահավատ շնորհում

6) Ներդնել կրթական ծրագրերում գործատուների կարիքների ուսումնասիրման և ուսումնառության գործընթացում համապատասխան առաջադրանքների ներառման համակարգված, ինստիտուցիոնալ մեխանիզմներ:

7) Ձևավորել ուսանողներին տրամադրվող առաջադրանքների ամբողջական բազա ուսանողների ուսումնառության ընթացքն ավելի պլանավորված դարձնելու և առաջընթացը գնահատելու նպատակով:

8) Սահմանել հստակ չափանիշներ ուսանողների ընթացիկ առաջադրանքների, պրակտիկաների ու ավարտական աշխատանքների գնահատման համար:

9) Ներդնել կրթական ծրագրերի համեմատական վերլուծության և բենչմարքինգի մեխանիզմներ՝ լավագույն փորձի վերհանման և տեղայնացման նպատակով:

10) Կիրառել կրթական ծրագրերի մշտադիտարկման արդյունավետ մեխանիզմներ՝ ուսանողների ձեռքբերած վերջնարդյունքները շարունակաբար գնահատելու միջոցով:

11) Ներդնել դասախոսական կազմի վերապատրաստման և դասավանդման լավագույն ներքին փորձի տարածման մեխանիզմներ։

12) Կիրառել գործատուների հետ համագործակցության հնարավորությունը՝ դասախոսների մասնագիտական վերապատրաստումների պլանավորման ու իրականացման համար։

13) Ընդլայնել գործատու դասավանդողների շրջանակը՝ աշխատաշուկայի պահանջներին համահունչ ուսանողների գործնական հմտությունների և կարողությունների զարգացման նպատակով։

14) Քայլեր ձեռնարկել քոլեջի մասնագիտական օտարալեզու գրականության համալրման, ինչպես նաև առցանց գրադարանային աղբյուրներին հասանելիություն ապահովելու ուղղությամբ։

15) Ուսանողների անվտանգ մասնագիտական գործունեությունն ապահովելու նպատակով մասնագիտական մոդուլներում ներառել անվտանգության կանոնների իմացությանն ու պահպանմանն ուղղված առաջադրանքներ։

16) Օգտագործել քոլեջի դասախոսական կազմի ներուժը՝ կարճաժամկետ դասընթացների իրականացման ու ֆինանսական լրացուցիչ մուտքեր ապահովելու համար։

Երկարաժամկետ զարգացում

17) Ձևավորել շրջանավարտների տվյալների բազա, շարունակաբար և պարբերաբար ուսումնասիրել նրանց հետագիծը՝ արդյունքներն օգտագործելով կրթական ծրագրերի մշտադիտարկման համար։

18) Կանոնակարգել ուսանողներին տրվող հետազոտական աշխատանքները՝ դրանք ամբողջովին արտացոլելով կրթական ծրագրերում և սահմանելով դրանց գնահատման հստակ չափանիշներ։

19) Լավարկել ներքին հաշվետվողականության համակարգը՝ գործընթացների արդյունավետության մշտադիտարկման և հետագա բարելավումների ուղղությունները նախանշելու նպատակով։

20) Քոլեջի ներուժի կիրառմամբ արտաքին շահակիցների համար լրացուցիչ դասընթացներ իրականացնել՝ հասարակական պատասխանատվության բարձրացման և լրացուցիչ ֆինանսական ներհոսք ապահովելու համար։

21) Ընդլայնել ուսանողների պրակտիկաների շրջանակը՝ կրթական ծրագրերով սահմանված զբաղմունքների ուղղությունները հաշվի առնելու միջոցով։



Յասաման Ավագյան
Փորձագիտական խմբի ղեկավար

12-ը նոյեմբերի, 2024 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

Յասաման Ավագյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, փորձագիտական խմբի ղեկավար:

Լիլիթ Աբելյան՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ:

Օլյա Ավետիսյան՝ Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի մասնագիտական առարկաների ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:

Ամալյա Ստեփանյան՝ Հայաստանում եվրոպական համալսարանի «Մարքեթինգ և կառավարում» բաժնի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման բաժնի մասնագետ **Մերի Բարսեղյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջն ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար (25.12.2023թ.) ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո հաստատության և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ:

Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 2024թ. մայիսի 13-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

Նախնական այց

2024թ. սեպտեմբերի 9-ին հանդիպում է տեղի ունեցել Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024թ. սեպտեմբերի 19-21-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, ռեսուրսերի դիտարկում և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը խմբի անդամների հաստատումից հետո տրամադրվել է քոլեջին։

Քոլեջը փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ դիտողություններ և առարկություններ չի ունեցել։

Փորձագիտական խումբը և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են զեկույցի վերջնական տարբերակը, որը հաստատվել է խմբի անդամների կողմից 2024 թ.-ի նոյեմբերի 12-ին։

Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

12-ը նոյեմբերի, 2024 թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջի առաքելությունը, տեսլականը, արժեքները ձևակերպված են քոլեջի 2023-2028թթ. զարգացման ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ԶՌԾ): Ըստ ԶՌԾ-ի՝ քոլեջի առաքելությունն է պատրաստել այնպիսի մասնագետներ, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, կարողություններով և պրակտիկ հմտություններով համարժեք կարձագանքեն առկա մարտահրավերներին, համապատասխան գործողություններով կաջակցեն ՀՀ տնտեսության զարգացմանն ու կայացմանը: Առաքելությունն իրականացնելու համար քոլեջը սահմանել է յոթ հիմնական ուղղություններ՝ ապահովել քոլեջի արդյունավետ կառավարումը, ուսանողներին տրամադրել մասնագիտական անհրաժեշտ և ժամանակակից գիտելիքներ, բարելավել քոլեջի կրթության ֆինանսատնտեսական բազան, ապահովել ուսանողակենտրոն քաղաքականություն, բարելավել քոլեջի միջազգայնացման մակարդակը, բարելավել քոլեջի ուսանողների հետազոտական կարողությունները, բարելավել որակի ապահովման ներքին համակարգը և քաղաքականությունը:

Քոլեջն իրականացնում է ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համահունչ վեց միջին մասնագիտական կրթական ծրագրեր հետևյալ 4 ոլորտներում՝ ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա, սպասարկում և զբոսաշրջություն, մշակույթ, տնտեսագիտություն և կառավարում: Քոլեջում իրականացվող մասնագիտությունների մեծ մասը համահունչ են ՀՀ տնտեսության առաջնահերթ ուղղություններին: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ հաշվի առնելով գործատուների առաջարկները՝ քոլեջում ներդրվել են «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Դիզայն» մասնագիտությունները:

Քոլեջի 2023-2028թթ. ԶՌԾ-ը հաստատվել է ընդհանուր ժողովի կողմից, վերջինս մշակվել է նախորդ՝ 2018-2023թթ. ԶՌԾ-ի կատարողականի գնահատման և SWOT վերլուծության հիման վրա: Ի տարբերություն նախորդ ԶՌԾ-ի՝ նոր ԶՌԾ-ում յուրաքանչյուր նպատակի համար սահմանված են խնդիրներ, առանձնացված են նպատակների իրականացման համար անհրաժեշտ գործողություններ, իրականացման ժամկետներ, առաջընթացի գնահատման ցուցիչներ:

Փաստաթղթերի դիտարկումից և փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջի ֆինանսական պլանավորումը դեռևս ԶՌԾ–ի ոչ բոլոր նպատակներն ու խնդիրներն է ընդգրկում: Այսպես օրինակ, ֆինանսական միջոցներ չեն հատկացվել հետազոտության իրականացման, դասախոսների վերապատրաստման ուղղությամբ: Քոլեջի հիմնական ֆինանսական միջոցները տրամադրվում են համալսարանի բյուջեից՝ ըստ անհրաժեշտության ուղղվելով աշխատավարձերի տրամադրմանը, ռեսուրսների

բարելավմանը: Ֆինանսների ներգրավման այլընտրանքային աղբյուրներ քոլեջը պլանավորում է ունենալ:

Քոլեջն իր 2023-2028թթ. ԶՌԾ-ում խնդիր է դրել բարելավել Քոլեջի կադրային ներուժը, համալրել և արդիականացնել նյութատեխնիկական բազան, ուսանողներին տրամադրել մասնագիտական անհրաժեշտ և ժամանակակից գիտելիքներ: Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ վերջին երկու տարիների ընթացքում որակյալ կադրերի ներգրավման և պահպանման նպատակով բարձրացվել են աշխատավարձերը, գործատուների հետ համագործակցության արդյունքում համալրվել են ռեսուրսները, ներդրվել են 2 նոր մասնագիտություններ՝ ապահովելով ուսանողների թվի աճ:

Քոլեջն իր ինքնավերլուծությունում սահմանում է ներքին և արտաքին շահակիցներին: Քոլեջի ներքին շահակիցներն են քոլեջի ղեկավարությունը (վարչական կազմ), ուսանողները, դասախոսական և ուսումնա-օժանդակ կազմը, արտաքին շահակիցներն են շրջանավարտները, ուսանողների ծնողները, գործատուները, պետական և մասնավոր կառույցները:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցներն ընդհանուր առմամբ կիսում են Քոլեջի որդեգրած առաքելությունը և սահմանված նպատակները: Չնայած վերջիներս ԶՌԾ-ի մշակման աշխատանքներին էական մասնակցություն չեն ունեցել, այդուհանդերձ ԶՌԾ-ն քննարկվել և հաստատվել է քոլեջի ընդհանուր ժողովում:

Անդրադառնալով քոլեջի ԶՌԾ-ում սահմանված առաջընթացի գնահատման ցուցիչներին, հարկ է նշել, որ դրանք մեծամասամբ մշակված փաստաթղթերի առկայություն են նախատեսում: Սակավ են քանակական կամ որակական փոփոխություն ենթադրող արդյունքները: Քոլեջում ԶՌԾ մշտադիտարկման մեխանիզմները մինչ 2023թ. համակարգված բնույթ չեն կրել: 2023թ. ՈԱ նոր պատասխանատուի առաջին քայլերից է եղել 2018-2023 թթ. զարգացման ծրագրի կատարողականի գնահատումը, շահակիցների հետ քննարկումների և հանդիպումների անցկացումը: Այդ քննարկումները նպաստել են բացթողումների հաշվառմանը և 2023-2028 թթ. նոր զարգացման ռազմավարական ծրագրի մշակմանը:

Հարկ է նշել, որ ներքին շահակիցները քոլեջի առաջընթացի գնահատման ցուցիչ դիտարկում են դիմորդների թվի աճը (2022թ.-ի համեմատ (30 ուսանող)՝ 2023թ.-ին ընդունվողների թիվը կազմել է 136 ուսանող), շուկայում ճանաչելի դառնալու նպատակով՝ օտարալեզու կրթական ծրագրի ներդրումը, շրջանավարտների զբաղվածության և կրթությունը շարունակելու ցուցանիշները՝ հատկապես կարևորելով մասնագիտությամբ աշխատելու տվյալները, բարեկարգված և նոր ռեսուրսներով համալրված ուսումնառության միջավայրը:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջը 2024թ. մշակել է ԶՌԾ իրականացման արդյունավետության գնահատման քաղաքականություն, ըստ որի նախատեսվում է ՈԱ պատասխանատուի կողմից վեց ամսվա և տարեկան կտրվածքով ԶՌԾ-ի իրականացման մշտադիտարկում՝ ըստ արդյունավետության ցուցիչների: ԶՌԾ գնահատման նպատակով քոլեջը մշակել է հաշվետվության նոր ձևաչափ՝ ըստ ԶՌԾ նպատակների և խնդիրների: Վերջինիս հիման վրա կառուցվում է հաստատության հիմնական տարեկան հաշվետվությունը, որը ներկայացվում է Ընդհանուր ժողովին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը, որպես ՈԱՇ-ի 5-րդ մակարդակում կրթական ծրագրեր իրականացնող հաստատություն, որդեգրել է

դրան համահունչ նպատակներ և տեսլական, մատնանշել է ՀՀ տնտեսությանը և զարգացմանը միտված առաքելություն: Դրական է, որ քոլեջն իր 2023-2028թթ. ԶՌԾ-ի իրականացման համար մշակել է պլան-ժամանակացույց՝ իր գործողություններով, պատասխանատուներով, ներդրել է խնդիրների իրականացումը գնահատող արդյունավետության ցուցանիշներ, այդուհանդերձ փորձագիտական խումբը գտնում է, որ ԶՌԾ-ում պատասխանատուների հստակ առանձնացումը, կնպաստի առավել արդյունավետ ռազմավարական պլանավորման իրականացմանը: Միաժամանակ, կարևոր է, որ քոլեջը քայլեր է ձեռնարկում արտաբյուջեի ձևավորման և այլընտրանքային ֆինանսական միջոցների հայթայթման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնել ռազմավարական զարգացման բոլոր ուղղությունների համար:

Գովելի է, որ քոլեջը կարևորում է իր շահակիցների ներգրավումը ռազմավարական ուղղությունների և նպատակների ձևավորման հարցում, միաժամանակ տեսանելի են նաև աշխատաշուկայի ներկայացուցիչների մասնակցության (ռեսուրսների համալրման, նոր կրթական ծրագրերի ներդրման, ուսումնական գործընթացների իրականացման) դրական ազդեցությունը:

Դրական է, որ Քոլեջը կարևորել է ԶՌԾ մշտադիտարկման գործընթացը և կանոնակարգելու նպատակով ներդրել է Քոլեջի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման մեխանիզմներ ու ընթացակարգեր: Փորձագիտական խումբը գտնում է, որ ցուցիչների հստակեցումը, ակնկալվող քանակական և որակական արդյունքների սահմանումը կնպաստեն առավել կանխատեսելի պլանավորման իրականացմանը, հնարավորություն կտան վերահսկելու ռազմավարական ծրագրի կատարման ընթացքը և ապահովելու հաստատության զարգացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի հստակ առաքելություն, որին հասնելու համար սահմանել է նպատակներ և խնդիրներ, ներքին և արտաքին շահակիցները կիսում են քոլեջի առաքելությունը և զարգացման ուղղությունները, քոլեջը փորձել է սահմանել որոշ մեխանիզմներ ու ցուցիչներ զարգացման ընթացքը գնահատելու համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջի կառավարումն իրականացվում է կոլեգիալ կառավարման, միանձնյա ղեկավարման և ինքնավարության սկզբունքների զուգորդմամբ: Քոլեջի կառավարման մարմիններն են ընդհանուր ժողովը, տնօրենական խորհուրդը, մանկավարժական խորհուրդը: Քոլեջի ընթացիկ կառավարումն իրականացնում է Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի ռեկտորի կողմից նշանակված

քոլեջի տնօրենը։ Վերջինս պատասխանատու է քոլեջի կողմից իրականացվող աշխատանքների որակի և գործառույթների պատշաճ իրականացման համար։

Մանկավարժական խորհրդում քննարկվում են ուսումնական գործընթացին առնչվող ընթացիկ խնդիրները, իսկ համապատասխան առաջարկներն ուղղորդվում են տնօրենական խորհուրդ, ապա ընդհանուր ժողով։ Խորհուրդներում ընդգրկված են ղեկավար կազմը, ստորաբաժանման պատասխանատուներ, դասախոսներ և ուսանողական խորհրդի անդամներ և որպես արտաքին շահակիցներ ներգրավված են գործատուներ, որոնք համատեղությամբ դասավանդում են քոլեջում, ծնողներ։ Հարկ է նշել, որ տնօրենական և մանկավարժական խորհուրդների նախագահը քոլեջի տնօրենն է։

Քոլեջի կառավարման համակարգի բարելավման գործընթացը մեկնարկել է 2023թ.-ին, որի արդյունքում վերանայվել է քոլեջի կազմակերպական կառուցվածքը, վերակազմավորվել են մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժինը, նշանակվել է պրակտիկայի կարիերայի և արտաքին կապերի պատասխանատու, որակի ապահովման պատասխանատու։

Հաստատված կառուցվածքային փոփոխություններին համապատասխան կառավարման մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների համար մշակվել են կանոնակարգեր, պաշտոնի անձնագրեր և այլ նորմատիվ փաստաթղթեր։

Փորձագիտական հանդիպումներից պարզվեց, որ ներքին շահակիցները բավականաչափ իրազեկված չեն իրենց գործառույթների մասին։ Միաժամանակ, պաշտոնի անձնագրերում արտացոլված գործառույթները հաճախ չեն ներկայացնում տվյալ աշխատակիցների գործունեության իրական շրջանակը։ Այսպես օրինակ, ՄՌԿ և ընդհանուր բաժնի պատասխանատուի համար մշակվել են երկու պաշտոնի անձնագրեր, որոնցից մեկում սահմանված են ստորաբաժանման առանձնահատկություններին համապատասխան գործառույթներ, իսկ մյուսում որպես աշխատանքային գործառույթներ են սահմանված ուսումնական մասի կանոնադրությամբ նախատեսված աշխատանքների մեթոդական ղեկավարումը, ուսումնական ծրագրերում լրացումներ, փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը, խորհրդատվության տրամադրումը, ՊԿՉ-ի համապատասխան ՄԿԾ-ի վերանայումը և իրականացումը։ Որակի ապահովման պատասխանատուի աշխատանքային գործառույթներից են ուսումնական աշխատանքների կազմակերպումը և դրանց ընթացքի հսկողությունը, տարատեսակ լրացուցիչ միջոցառումների ծրագրումը և կազմակերպումը։ Առանցքային դեր ունեցող վարչական որոշ պատասխանատուներ էլ ունեն մեծ բեռնվածություն, այսպես որակի ապահովման պատասխանատուն միաժամանակ և՛ ամբիոնի վարիչ է, և՛ դասախոս։

Հաստատության կազմակերպական կառուցվածքի դիտարկումը ցույց է տալիս, որ կառուցվածքային գծապատկերում տեսանելի չեն որակի ապահովման, պրակտիկայի, կարիերայի և արտաքին կապերի պատասխանատուի, ՄՌԿ կապերի և ընդհանուր բաժնի ու քոլեջի այլ ստորաբաժանումների միջև հորիզոնական կապերը։ Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի կառուցվածքային միավորները համագործակցում են իրար հետ իրենց գործառույթների շրջանակում։ Հարկ է նշել, որ կան կառուցվածքային միավորներ, որոնք տեղ չեն գտել կառուցվածքում, օրինակ ուսումնական գործընթացի կազմակերպման բաժինը։ Վերջինս՝ համաձայն իր կանոնակարգի, կազմակերպում է քոլեջի ուսումնական գործընթացը, համակարգում է ուսումնական պլանների մշակման և նոր կրթական ծրագրերի մշակման աշխատանքները։

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջում կրթական ծրագրերի մշակման ու կառավարման նպատակով նշանակվել են կրթական ծրագրի պատասխանատուներ, սակայն վերջիններիս գործառույթները դեռևս հստակեցված չեն։

Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանը ֆինանսական միջոցներ է հատկացնում քոլեջի համար՝ հաշվի առնելով քոլեջի կարիքները։ Քոլեջի ֆինանսական ներհոսքերը սահմանափակ են և պայմանավորված են ուսանողների վարձավճարներով։ Որպես այլընտրանքային ֆինանսական հոսքերի ներգրավման աղբյուր՝ քոլեջը դիտարկում է դրամանշնորհները կամ օտարալեզու կրթական ծրագրի իրականացումը, ինչը նախատեսում է իրականացնել առաջիկայում։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջը ըստ ԶՌԾ-ի ֆինանսական համապատասխան պլանավորում և գնահատում դեռևս չի իրականացրել։ Ֆինանսների բաշխումը քոլեջն իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ եկամուտների և ծախսերի նախահաշվի հիման վրա։ Ծախսերը հիմնականում ներառում են աշխատակիցների աշխատավարձերը (55,5%), հիմնական միջոցների ձեռք բերման համար ֆինանսներ (12,3%), ինչպես նաև ուսումնական ծախսեր (0,06%), մնացյալ ֆինանսները հատկացվում են շենքի վարձակալության, գրասենյակային, տնտեսական և այլ ծախսերին։ Միաժամանակ, փորձագիտական հանդիպումներից պարզվեց, որ քոլեջի ֆինանսական մուտքերի (ուսանողների թվով պայմանավորված) նվազման դեպքում հաստատությունը պատրաստ է համալսարանի ռեսուրսները տրամադրել քոլեջի զարգացմանը։ Ֆինանսական հատկացումների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջում վերջին երկու տարիների ընթացքում աշխատավարձերի բարձրացում է իրականացվել մոտ 15%-ով։ ԶՌԾ-ով նախատեսված դասախոսական կազմի վերապատրաստումների համար նախահաշվում ֆինանսական միջոցներ չեն հատկացվել։

2023թ.-ից բուհի և քոլեջի համար միասին գործում են էթիկայի կանոնակարգ և ներքին կարգապահական կանոններ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ էթիկայի կանոնների խախտման դեպքեր քոլեջում չեն արձանագրվել։

Քոլեջի կառավարման գործընթացներում ներգրավված են ներքին և արտաքին շահակիցներ (դասախոսներ, ուսանողներ և գործատուներ)։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները մեծ ակտիվություն չեն ցուցաբերում տնօրենական կամ մանկավարժական խորհուրդներում իրենց խնդիրների բարձրաձայնման ուղղությամբ։ Նրանք գերադասում են խնդիրները լուծել դիմելով խորհրդատուներին (կուրսղեկներին), փոխտնօրենին կամ տնօրենին։ Վերջիններիս միջոցով քոլեջում իրականացվել է ռեսուրսների (բուֆետ, պրոյեկտոր, համակարգիչ) համալրում։ Դասախոսական անձնակազմը խնդիրները վերհանում է մանկավարժական խորհրդում, որտեղ հիմնականում քննարկվում են ընթացիկ կրթական հարցեր։

Քոլեջն ունի երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորում։ Երկարաժամկետ է դիտարկվում ԶՌԾ-ն (2023-2028թթ.), կարճաժամկետ՝ ստորաբաժանումների կողմից մշակված աշխատանքային պլանները։ Դրանց ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ պլանավորված գործընթացները հաճախ չեն բխում ստորաբաժանումների գործառութային շրջանակից։ Այսպես օրինակ, որակի ապահովման պատասխանատուի աշխատանքային պլանը իրենից ներկայացնում է ԶՌԾ-ի նպատակների իրականացման պլան-ժամանակացույցը։ Ընդ որում, պլանով նախատեսված 46 գործողություններից գերակշիռ մասի (40-ը) իրականացման համար պատասխանատու նշանակված է որակի ապահովման պատասխանատուն։ Փաստացի աշխատանքների զգալի չափաբաժինը ՈԱ պատասխանատուինն է։ Վերջինիս պլանում

ներառված է՝ կազմակերպել հետազոտական, գիտական միջոցառումներ տեղական և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ համատեղ, միևնույն ժամանակ այս գործընթացը ամբողջությամբ պետք է իրականացնի պրակտիկայի, կարիերայի և արտաքին կապերի բաժինը (համաձայն ստորաբաժանման կանոնակարգի), սակայն վերջինիս պլանում այն ներառված չէ։

Քոլեջի ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքները ամփոփվում են տարեկան հաշվետվությամբ, սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանցում արձանագրվում են տարվա ընթացքում կատարված աշխատանքները, ցույց են տալիս՝ գործողությունը կատարվել է, թե ոչ, բայց ներկայացված չեն որակական փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել գործողությունների հետևանքով։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզվեց, որ քոլեջի կառուցվածքային միավորները պատրաստում են հաշվետվություններ, սակայն հստակ չէ հաշվետվողականության շրջանակը. շահակիցները հստակ պատկերացումներ չունեն, թե որ ստորաբաժանումն ում է հաշվետու։

Որակի ապահովման գործընթացների շրջանակում հավաքագրվում են տվյալներ ուսումնական գործընթացի, ռեսուրսներից բավարարվածության, ուսանողների կարիքների վերհանման վերաբերյալ։ Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ կառավարման համակարգի կողմից հստակեցված չեն այն ուղղությունները, որոնց վերաբերյալ կառավարիչները տվյալների կարիք ունեն որոշումների կայացման համար։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հավաքագրված տվյալները ծառայել են ռեսուրսների բարելավմանը։

Քոլեջը որակի ապահովման ձեռնարկում նախանշել է ՊԻԳԲ սկզբունքը իր գործընթացների կառավարման համար։ Գտնվելով որակի ապահովման համակարգի ներդրման ու կառավարման մեխանիզմների փոփոխության անցումային փուլում՝ քոլեջի գործընթացները հիմնականում պլանավորման ու իրականացման փուլում են։

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման վերաբերյալ որոշ տվյալներ ներկայացված են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում, սակայն դրանք դեռևս չեն վերլուծվել քոլեջի կողմից։ Քոլեջի պաշտոնական կայքէջի «Կրթություն» բաժնում ներկայացված են իրականացվող ՄԿԾ-ների փաթեթները՝ ուսումնական պլաններ, առարկայական/մոդուլային ծրագրեր։ Քոլեջում իրականացվող բարեփոխումների շրջանակում կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվության հրապարակումների մեխանիզմների արդյունավետության գնահատումը դեռևս պլանավորման փուլում է։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի կառուցվածքային բարելավումները, ստորաբաժանումների համար աշխատանքային ընթացակարգերի ներդրումը, պաշտոնի անձնագրերի մշակումը և գործառույթների սահմանումը, ինչի միջոցով քոլեջը փորձել է կանոնակարգել կառավարման ու վարչարարության գործընթացները։ Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը պետք է վերահսկի դրանց կատարումը, ապահովի գործառույթների վերաբերյալ շահակիցների իրազեկվածությունը՝ սահմանված գործընթացների արդյունավետ իրականացման համար։ Գովելի է այն հանգամանքը, որ քոլեջում գործում են մի շարք խորհուրդներ, հանձնաժողովներ,

ստորաբաժանումներ և պատասխանատուներ, որոնց մի մասում ընդգրկված են նաև ներքին և արտաքին շահակիցներ: Դա հնարավորություն է ստեղծում խնդիրները քննարկել մի քանի օղակներում, ստանալ նաև արտաքին շահակիցների ազդակները գործընթացների պլանավորման համար:

Քոլեջը ներկայումս ունի սահմանափակ ռեսուրսներ, սակայն ցուցաբերում է ճկունություն՝ դրանք արդյունավետ կառավարելու համար: Ճկունության շնորհիվ քոլեջը կարողանում է արձագանքել փոփոխություններին և արագ որոշումներ կայացնել: Փորձագիտական խմբի դիտարկմամբ ֆինանսական միջոցների հստակ բաշխման պլանի մշակումը, որը կապակցված կլինի ռազմավարական նպատակների հետ, կերաշխավորի, որ բոլոր առաջնահերթ համաչափ զարգանան:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն իրականացնում է կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորում: Փորձագիտական խումբը կարևորում է նաև հաշվետվողականության գործընթացների լավարկման անհրաժեշտությունը՝ իրականացված գործընթացների վերլուծության, պլանավորման և առկա մարտահրավերների դուրսբերման ու դրա հենքով բարելավման գործողությունների մշակման համար: Անհրաժեշտ է չափել կարճաժամկետ և երկարաժամկետ պլանների արդյունավետությունը, ինչը թույլ կտա ավելի լավ վերահսկել ռիսկերը և հստակեցնել մարդկային ու ֆինանսական ռեսուրսների արդյունավետ բաշխումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն իր գործընթացների կառավարումը փորձում է իրականացնել ՊԻԳԲ շրջափուլի միջոցով, ինչի շարունակաբար ու պարբերական իրականացումը կհանգեցնի գործընթացների բարելավմանը ու կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը:

Հստակ տվյալների վրա հենված կառավարչական որոշումների կայացման համար փորձագիտական խումբը շեշտադրում է քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների պարբերական ուսումնասիրման անհրաժեշտությունը: Քոլեջի գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ համակողմանի տվյալների վերլուծության հիմքով կայացված որոշումները կնպաստեն հաստատության կայուն զարգացմանը:

Քոլեջի գործունեության թափանցիկության ու շնորհվող որակավորումների մասին տեղեկատվության հրապարկման հնարավորությունների ստեղծումը կարող է նպաստել ուսանողների ներհոսքի ավելացմանն ու քոլեջի մասին իրազեկվածության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում ստորաբաժանումներն ունեն տարբեր ընկալումներ իրենց գործառութային շրջանակի վերաբերյալ, հստակ չեն ստորաբաժանումների միջև համագործակցության մեխանիզմները, գործառույթների բաշխումն անհամաչափ է, զարգացման ուղղությունների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ դեռ չեն հատկացվում, կարճաժամկետ պլանները չեն կապակցվում ռազմավարական ծրագրի հետ, կառավարչական որոշումները հաճախ չեն հիմնվում հաստատության գործունեության վերաբերյալ համապարփակ տվյալների վերլուծության վրա՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Մաշտոցի անվան համալսարանի բազային քոլեջն իրականացնում է 6 մասնագիտություններով միջին մասնագիտական կրթական ծրագրեր՝ «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Հաշվապահական հաշվառում», «Սպասարկման կազմակերպում», «Զբոսաշրջություն», «Դիզայն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտություններով: Իրականացվող կրթական ծրագրերից երկուսը՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Դիզայն», ներդրվել են 2023-2024 ուստարվանից: Շահակիցների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրի ներդրման համար հիմք են հանդիսացել գործատուների առաջարկները: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ներդրված կրթական ծրագրերի իրականացումը վերջին երկու տարիներին նպաստել է ուսանողների թվաքանակի աճին. մինչ նոր կրթական ծրագրերի մեկնարկը քոլեջում կրթություն է ստացել 108 ուսանող, 2023-2024 ուստարում՝ 216 ուսանող, իսկ այս ուստարում ուսանողների թիվը 280 է: Քոլեջի առաքելությամբ սահմանված է այնպիսի մասնագետների պատրաստումը, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, կարողություններով և պրակտիկ հմտություններով համարժեք կարձագանքեն առկա մարտահրավերներին՝ համապատասխան գործողություններով, կաջակցեն ՀՀ տնտեսության զարգացմանն ու կայացմանը:

Քոլեջի ռազմավարական նպատակներից է կրթական գործունեությունը, որի իրականացման խնդիրներից է ըստ ՊԿՉ-ների՝ ՄԿԾ-ների փաթեթների նոր ձևաչափի մշակումը, դասընթացների վերանայումը:

Քոլեջը մոդուլային ուսուցման համակարգի է անցել 2022-2023 ուստարվանից, որով պայմանավորված ամբողջությամբ վերանայվել են կրթական ծրագերը՝ հիմք ընդունելով ՊԿՉ-ները և որակավորումների ազգային շրջանակը: Կրթական ծրագրերի և վերջնարդյունքների քարտեզագրման ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ իրականացվող կրթական ծրագրերի վերջնարդյունքները համադրելի են որակավորումների ազգային շրջանակի նկարագրիչներին և ՊԿՉ-ներին:

Փորձագիտական ուսումնասիրությունները պարզեցին, որ ՊԿՉ-ների տեղայնացման և ուսումնական պլանների մշակման գործընթացը կառավարվում է փոխտնօրենի, ուսումնական մասի և որակի ապահովման պատասխանատուի կողմից, ով հանդիսանում է նաև «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրի պատասխանատուն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Սպասարկման կազմակերպում» կրթական ծրագրերի պատասխանատուները և դասախոսական կազմը ՊԿՉ-ների տեղայնացմանը և ուսումնական պլանների կազմմանը ներգրավված չեն եղել: Առարկայական ծրագրերը մշակվել են դասախոսների մասնակցությամբ: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կրթական ծրագրերի մշակման գործընթացում որոշակիորեն արտահայտված են գործատուների կարիքներ, մասնավորապես՝ «Սպասարկման կազմակերպում» կրթական ծրագրում գործատուների առաջարկով ավելացվել են գործնական և օտար լեզվի դասընթացների ժամաքանակները: Մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ որոշ կրթական ծրագրերում (օրինակ «Հաշվապահական հաշվառում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում») ընդգրկված են պրակտիկ ոլորտից դասավանդողներ՝ այդկերպ մասնագիտական պահանջները փորձելով ներառել ուսումնառության նյութերում:

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք ներառում են դասընթացի նպատակը, խնդիրները, մուտքային պահանջները, ուսումնառության արդյունքները, առարկայի ուսումնառության արդյունքների համապատասխանությունը ՊԿՉ-ով ակնկալվող վերջնարդյունքներին, դասընթացի կառուցվածքը, որում զետեղվել են դասընթացի թեմաները, հավելվածի տեսքով կցվել են առարկայի օրացուցային պլանը, առարկայի ուսումնառության արդյունքների ձեռքբերումը ապահովող դասավանդման և ուսումնառության մեթոդները, գնահատման կարգը, օգտագործվող գրականության ցանկը, ծրագրի ակնկալվող արդյունքների ձևավորման քարտեզ, ծրագրի ակնկալվող արդյունքների և դրանց դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանեցման աղյուսակ:

Փորձագիտական խմբի կողմից դիտարկված կրթական ծրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա են առարկաների հաջորդականության և մուտքային պահանջների անհամապատասխանություններ: Օրինակ, «Հագուստի մոդելավորում և նախագծում» կրթական ծրագրում պահուստային ժամերի հաշվին նախատեսված «Գունային տեսություն» և «Գունային տեխնիկա» առարկաների ուսումնասիրություն համար մուտքային պահանջները հաշվի չեն առնվել: Նշված առարկաները պետք է հիմք դառնան օրինակ «Գունանկար», «Հագուստի հավաքածու» մոդուլների իրականացման համար, սակայն այս առարկաներն ուսումնասիրվում են չորրորդ կուրսում: Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսումնասիրվող դասընթացների հաջորդականության այս դեպքում դասավանդվող մոդուլների յուրացման համար դասախոսները փորձում են բացատրել անհասկանալի հատվածները, պատասխանել ուսանողների հարցերին:

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջում բացի հիմնական հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից, ուսումնասիրվում են նաև առարկաներ ընտրովի և պահուստային ժամերի հաշվին: Ծրագրերում ներդրվել են նաև նախասիրական առարկաներ: Այսպես օրինակ, «Սպասարկման կազմակերպում» կրթական ծրագրի շրջանակում որպես նախասիրական առարկաներ ներդրվել են «Հոգեբանություն» և «Վարվերալակերպի հիմունքներ» առարկաները, պահուստային ժամերի հաշվին՝ «Ռուսաց լեզու», իսկ որպես ընտրովի դասընթաց «Մասնագիտական հաղորդակցում օտար լեզվով-2 (պարսկերեն)»: Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի շրջանակում ներդրված նախասիրական, ընտրովի և պահուստային ժամերի հաշվին իրականացվող դասընթացների ընտրության միասնական մեխանիզմներ առկա չեն:

Ուսումնասիրելով հանրակրթական առարկաների տեղաբաշխումը կրթական ծրագրերում՝ պարզ դարձավ, որ քոլեջը, դիտարկելով ուսանողների մասնագիտական պատրաստվածությունը ուսումնառության առաջին տարում, մասնագիտական առարկաներ ընդգրկել է նաև առաջին կուրսում: Օրինակ՝ «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրում ընտրովի հետևյալ դասընթացները՝ «Հաշվապահական հաշվառման ներածություն» և «Ֆինանսների հիմունքներ», ուսումնասիրվում են առաջին տարում: Նույն սկզբունքով է ձևավորվել նաև «Հագուստի մոդելավորում և նախագծում» կրթական ծրագրի մոդուլների հաջորդականությունը, մասնավորապես, ուսումնառության առաջին տարում ուսումնասիրվում են ընդհանուր մասնագիտական մոդուլներ՝ «Մասնագիտական նկարչության և գեղարվեստական գրաֆիկայի նախնական հմտություններ», «Հագուստի պատրաստման համար օգտագործվող նյութերը ճանաչելու և ընտրելու հմտություններ», «Մեքենայական և ձեռքի կարատեսակներ կատարելու, կարի մեքենասարքավորումների օգտագործման հմտություններ» և այլ մոդուլներ:

Մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ հանրակրթական առարկաները դասավանդելիս ևս դասախոսները հաշվի են առնում ուսանողների մասնագիտական առանձնահատկությունները, օրինակ «Հանրահաշիվ» առարկայի առաջադրանքները տարբերվում են «Հաշվապահական հաշվառում» և «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտություններում՝ մի դեպքում օրինակ կենտրոնանալով ուսանողների՝ տոկոսը հաշվելու, մյուս դեպքում՝ չափումներ կատարելու կարողությունների վրա:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները ներկայացված են յուրաքանչյուր մոդուլային/ առարկայական դասընթացում: Յուրաքանչյուր դասախոս ընտրում է դասավանդման իր մեթոդները: Փորձագիտական ուսումնասիրությունների և դասալսումների արդյունքում պարզ դարձավ, որ քոլեջում դասի պլանավորման միասնական մոտեցում առկա չէ: Ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ դասախոսների կողմից կարևորվում և կիրառվում են դասավանդման և ուսումնառության ինտերակտիվ և նորարարական մեթոդները: Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը քոլեջում դիտարկվում է դասալսումների միջոցով: Դասալսումներն իրականացվում են որակի ապահովման պատասխանատուի, ամբիոնների վարիչների, ուսումնական մասի կողմից՝ համաձայն սահմանված կարգի: Դիտարկվում են դասի ուժեղ և թույլ կողմերը, դասախոսների մասնագիտական, մանակավարժական և մեթոդական պատրաստվածությունը, ուսանող-դասախոս հարաբերությունների ձևավորման հմտությունները: Համաձայն ինքնավերլուծության և շահակիցների հետ հանդիպումների՝ քոլեջը նախատեսում է դասավանդման և ուսումնառության մեթոդների մշտադիտարկման, վերանայման և արդիականացման աշխատանքներ իրականացնել 2025-2026 ուստարում՝ դասալսումների մեխանիզմի կիրառմամբ:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դասավանդող մասնագետների կողմից տրվում են ուսանողների մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացմանը նպաստող առաջադրանքներ: Մասնավորապես, ուսանողներին հաճախ հանձնարարվում են ռեֆերատներ, ինքնուրույն անհատական աշխատանքներ, իրավիճակային խնդիրներ, թեստեր, կազմակերպվում են խմբային և զրույց-քննարկումներ: Դասերին հաճախակի օգտագործվում են նաև տեսասահիկներ, դիտումներ, դիդակտիկ նյութեր:

Դասալսումներից պարզ դարձավ, որ «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ուսանողները հատուկ մասնագիտական երկու մոդուլներից՝ «Սեփական կապիտալ, եկամուտներ և ծախսեր» և «Աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով կրեդիտորական պարտքերի հաշվառում», ունեն աշխատանքային տետրեր, որոնցում տրված են ուսումնառություն նյութերը և դրանց համապատասխան գործնական առաջադրանքներ և խնդիրներ: Փորձագիտական ուսումնասիրությունները և շահակիցների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ դասախոսները կարևորում են ուսանողների հետ հետադարձ կապը:

Քոլեջն ունի «Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի կից բազային քոլեջի ուսանողի գիտելիքի ստուգման գնահատման և բողոքարկման կարգ»: Ուսանողների գիտելիքների գնահատումն իրականացվում է ուսումնառության ընթացքում/ընթացիկ/, կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին և ուսումնառության ավարտին /ամփոփիչ ավարտական ատեստավորում/: Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ գնահատման մեթոդները սահմանված են յուրաքանչյուր առարկայական/մոդուլային դասընթացի ծրագրում, մասնավորապես, ամրագրված են գնահատման բազմազան մեթոդներ՝ ինքնուրույն աշխատանքներ, բանավոր հարցումներ, ընթացիկ ստուգումներ, թեստային աշխատանքներ, վարժություններ, խնդիրներ, հարցաշարեր: Միջանկյալ ստուգումներն անցկացվում են հարցաշարերով, գրավոր և բանավոր մեթոդների կիրառմամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատման բողոքարկումներ հիմնականում չեն լինում, իսկ լինելու դեպքում ուսանողներին դասախոսների կողմից տրվում են լրացուցիչ առաջադրանքներ:

Փորձագիտական ուսումնասիրությունները և շահակիցների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ քոլեջում ուսանողների գնահատման չափանիշները հստակեցված չեն: Մասնավորապես, հստակ սահմանված չեն կատարման չափանիշներ ուսանողի ընթացիկ գնահատականների նշանակման համար (ինչ պետք է կարողանա իրականացնել ուսանողը համապատասխան թվանշան՝ օրինակ 6 կամ 7 ստանալու համար):

Ուսումնական պլաններում կրթական ծրագրերի համար նախատեսված են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական և նախաավարտական: «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրի ուսումնական նոր պլանում ներառվել է նաև մասնագիտական պրակտիկա, որը նախատեսված է ուսումնառության երկրորդ տարում: Քոլեջում առկա է «Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի կից բազային քոլեջի ուսանողների պրակտիկայի կազմակերպման կանոնակարգ»: Պրակտիկաներն իրականացվում են մասնագիտական նեղ առարկաների շրջանակում, սակայն պրակտիկայի ծրագրեր առկա չեն: Քոլեջի ուսանողները պրակտիկաներ անցնում են երկրորդ կուրսից սկսած: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պրակտիկաներն ընդգրկում են գործատու կազմակերպություններում շրջայցեր և գործնական պարապմունքներ: Պրակտիկաներն անցկացվում են գործատու կազմակերպություններում և քոլեջում, ընթացքը լրացվում է օրագրերում, ներկայացվում են հաշվետվություններ: Պրակտիկան անցկացնող գործատու ղեկավարների կողմից տրվում են բնութագրեր:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ գնահատման հստակ չափանիշներ առկա չեն պրակտիկաների համար:

Քոլեջում ամփոփիչ ատեստավորումներն անցկացվում են համաձայն «Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի կից բազային քոլեջի ամփոփիչ ատեստավորման կազմակերպման ու անցկացման մասին կարգ»-ի՝ ձևավորված հանձնաժողովների կողմից, որոնց կազմում ընդգրկվում են նաև արտաքին շահակիցներ, ոլորտի գործատուներ: Ամփոփիչ ատեստավորումներման քննությունները հիմնականում անցկացվում են բանավոր՝ նախապես մշակված քննական հարցաշարերով, որոնք ներառում են մասնագիտական առարկաներից հարցեր: «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության պետական ամփոփիչ ատեստավորման հարցատոմսերը պարունակում են տեսական հարցեր, որոշ գործնական առաջադրանքներ, մասնավորապես, թղթակցությունների հաշվապահական ձևակեպումներ: Հարցատոմսերում խնդիրներ ընդրգրված չեն: «Սպասարկման կազմակերպում» կրթական ծրագրի ավարտական հարցաշարը պարունակում է երեք տեսական հարցեր և մեկ գործնական առաջադրանք՝ անգլերեն լեզվով թարգմանություն: «Հագուստի մոդելավորում և նախագծում» կրթական ծրագրի ուսանողները ներկայացնում են ավարտական/դիպլոմային աշխատանքներ: Համաձայն «Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի կից բազային քոլեջի ամփոփիչ ատեստավորման կազմակերպման ու անցկացման մասին կարգ»-ի՝ ուսանողների ավարտական դիպլոմային աշխատանքների իրականացման համար նշանակվում են ղեկավարներ, անհրաժեշտության դեպքում խորհրդատուներ, աշխատանքը ենթակա է գրախոսման: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ավարտական աշխատանքների իրականացման ընթացքը չի վերահսկվում, գրախոսական առկա չէ: Ավարտական աշխատանքների թեմաների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք երբեմն չեն կապակցվում կրթական ծրագրերի վերջնարդյունքներին, այսպես օրինակ «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության համար ուսանողն ավարտական աշխատանք է կատարել «Բնակարանների ձևավորում մոդեռն ոճով» թեմայով: Ամփոփիչ ատեստավորմանը ուսանողները գնահատվում են գերազանց, լավ, բավարար և անբավարար: Ատեստավորման հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ օրինակ, հանձնաժողովի կողմից առաջարկվել է ուսումնական գործընթացում ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում, «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսանողների համար բարելավել պրակտիկաները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման պատասխանատուի կողմից նախատեսվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների վերլուծություն:

Փորձագիտական ուսումնասիրությունները պարզեցին, որ քոլեջը, չնայած արտաքին համագործակցությունների առկայությանը, կրթական ծրագրերի բենչմարքինգ և համեմատական վերլուծություն չի իրականացրել: Այցից պարզ դարձավ նաև, որ համագործակցություն է հաստատվել Վրաստանի քոլեջներից մեկի հետ, սակայն համագործակցությունը դեռևս պլանավորման փուլում է, ուղղությունները հստակեցված չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ կրթական նմանատիպ ծրագրերի միջազգային փորձի ուսումնասիրում քոլեջում չի իրականացվել:

Քոլեջն ունի «Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգ», որը համակցված է քոլեջի և համալսարանի համար: Կրթական ծրագրերում վերանայումներ և փոփոխություններ իրականացվել են 2022-2023 ուստարում՝ մոդուլային ուսուցման ներդրմամբ պայմանավորված, իսկ 2023-2024 ուստարում մշակվել են վերջնական փաթեթները: Ծրագրերում փոփոխություններն իրականացվում են՝ հաշվի առնելով դասավանդող դասախոսների կողմից առաջարկությունները:

Փորձագիտական ուսումնասիրությունների համաձայն՝ քոլեջում կրթական ծրագրերի մշտադիտարկման որոշակի մեխանիզմներ են դասալսումները, հարցումներն ուսանողների շրջանում, սակայն դրանց միջոցով հավաքագրված տվյալները չեն միասնականացվում կրթական ծրագրերի բարելավման վերաբերյալ որոշումների կայացման համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի կողմից ՊԿՉ-ների և ՀՀ որակավորումների ազգային շրջանակի հիման վրա կրթական ծրագրերի փաթեթների ամբողջական վերանայման և մշակման քայլերը, որոնք նպաստել են քոլեջում իրականացվող կրթական ծրագրերի բարելավմանը և համապատասխանեցմանը աշխատաշուկայի պահանջներին:

Գովելի է հաստատության կողմից գործատուների արձագանքների հիման վրա աշխատաշուկայի պահանջարկին համահունչ կրթական ծրագրերի ներդրումը, ինչը ապահովել է նաև ուսանողական համակազմի ներհոսք ներդրված մասնագիտությունների գծով: Դրական է նաև քոլեջի կողմից որոշ կրթական ծրագրերում գործատուների առաջարկների ընդգրկումը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը գործատուների կարիքների ուսումնասիրման և կրթական ծրագրերում դրանց ներդրման համակարգված և հստակ մեխանիզմներ ներդնի, ինչը կնպաստի աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան հմտություններով և կարողություններով առավել մրցունակ մասնագետների թողարկմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի կողմից մշակված ուսումնական պլաններում նախասիրական, ընտրովի, պահուստային ժամերի հաշվին մասնագիտական դասընթացների ներդրման քայլերը, ինչը նպաստում է ուսանողների նեղ մասնագիտական ու փոխանցելի հմտությունների ձևավորմանը: Ներդրվող դասընթացների ընտրության միասնական և համակարգված սկզբունքների և մեխանիզմների կիրառումը կնպաստի կրթական ծրագրերի բարելավման շարունակականությանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում դասավանդման և ուսումնառության բազմազանեցված մեթոդների, ինչպես նաև ուսանողների գործնական հմտությունների և կարողությունների զարգացմանը նպաստող առաջադրանքների կիրառումը դասավանդման գործընթացում: Այս համատեքստում կարևոր է հավաքագրել ուսանողներին դասախոսների կողմից տրամադրվող բոլոր առաջադրանքները և ստեղծել առաջադրանքների ամբողջական բազա, ինչը հնարավորություն կընձեռի ձևավորել կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձեռքբերման ճանապարհային քարտեզը՝ ցույց տալով ուսանողի պատրաստման ամբողջ ընթացքը:

Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում նաև ուսանողների գնահատման բազմազանեցված մեթոդների կիրառումը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը սահմանի դասընթացների և պրակտիկաների գնահատման հստակ չափանիշներ: Փորձագիտական խմբի դիտարկմամբ գնահատման հստակեցված չափանիշների կիրառումը հիմքեր կստեղծի դիտարկելու ուսանողների մասնագիտական առաջընթացը ուսումնառության ընթացքում և ապահովելու անհրաժեշտ հետադարձ կապը սահմանված վերջնարդյունքներին հասնելու համար: Ուսանողների պրակտիկաների գնահատման չափանիշների սահմանումը, փորձագիտական խմբի դիտարկմամբ, հնարավորություն կտա հաստատությանը դիտարկելու և գնահատելու ուսանողների պրակտիկ կարողությունների և հմտությունների պատրաստվածության մակարդակը, դրա հիման վրա ավելացնելու գործնական

առաջադրանքները և սահմանելու բարելավման ուղղությունները: Փորձագիտական խմբի կողմից կարևորվում է ավարտական դիպլոմային առաջադրանքների իրականացման ընթացքի մշտադիտարկումը «Հագուստի մոդելավորում և նախագծում» կրթական ծրագրում՝ ուսանողների աշխատանքների ուղղությունների հստակ ձևավորման, նրանց մասնագիտական պորտֆոլիոների ձևավորման համար, ինչը այնուհետև հնարավորություն կտա ուսանողներին դրանք կիրառելու աշխատանքի անցնելու համար:

Փորձագիտական խումբը, դրական գնահատելով կրթական ծրագրերի մշտադիտարկման որոշակի մեխանիզմների կիրառումը քոլեջում, այնուամենայնիվ դիտարկում է նաև կրթական ծրագրերի և դրանց ակնկալվող վերջնարդյունքների արդյունավետ մշտադիտարկման հստակ և համակարգված մեխանիզմների կիրառումը քոլեջում, որը հնարավորություն կտա հաստատությանը գնահատել ուսանողների մասնագիտական պատրաստվածության զարգացումը ուսումնառության ողջ ընթացքում և հետևել ուսանողի ու շրջանավարտի մասնագիտական հետագծի դինամիկային:

Դրական գնահատելով քոլեջի կողմից կրթական ծրագրերի վերանայման և մշակման իրականացված բարեփոխումները, այդուհանդերձ փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը նաև կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն իրականացնի այլ նմանատիպ կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների հետ՝ ընդլայնելով տեղական և միջազգային համագործակցությունների շրջանակը, քանի որ նպատակ ունի ներդնել նաև օտարալեզու կրթական ծրագիր և ձգտում է ապահովել եվրոպական չափանիշներին համահունչ կրթություն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը, հիմնվելով պետական կրթական չափորոշիչների ու որակավորումների ազգային շրջանակի վրա, կազմել է իր կրթական ծրագրերը, կրթական ծրագրերի բարելավման նպատակով իրականացվել են գործատուների կարիքների ներդրման քայլեր, դասախոսների կողմից ուսանողներին տրվում են գործնական կարողությունների զարգացմանն ուղղված առաջադրանքներ, որոնց իրականացման համար կիրառվում են նաև գործատուների ռեսուրսները, քոլեջում կիրառվում են դասավանդման և ուսումնառության բազմազան մեթոդներ, դասախոսների կողմից ուսանողներին տրվում է անհրաժեշտ հետադարձ կապ, գործում են կրթական ծրագրերի մշտադիտարկման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջի կողմից դիմորդների հավաքագրման նպատակով ընդունելության մասին տեղեկատվությունը տարածվում է քոլեջի սոցիալական հարթակներում, ինչպես նաև հրապարակվում է պաշտոնական կայքէջում:

Ուսանողների հավաքագրման նպատակով իրականացվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ՝ այցելություններ դպրոցներ, 9-րդ դասարանի աշակերտների համար կազմակերպվող բաց դռների օրեր, մասնագիտությունների առանձահատկությունների վերաբերյալ սեմինարներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման աշխատանքներում ներգրավված են ուսանողները, դասախոսները, Պրակտիկայի, կարիերայի և արտաքին կապերի բաժնի պատասխանատուն, քոլեջի ղեկավար կազմը:

Դիմորդներն ընդունվում են քոլեջ դպրոցի ատեստատի գնահատականներով, մրցութային քննություններ ընդունելության համար նախատեսված չեն:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ վերջին տարիներին դիմորդների թիվը դինամիկ աճել է: Դիմորդների թվաքանակի աճին նպաստել է «Դիզայն» և «Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգեր» մասնագիտություններով ընդունելության մեկնարկը 2023-2024 ուստարվանից, որի արդյունքում քոլեջ ընդունվել է ևս 69 ուսանող: 2024-2025 ուստարում ուսանողների թիվը 280 է:

Վերջին 5 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների հեռացումների հիմնական պատճառներ են հանդիսացել բացակայությունների մեծ թիվը կամ վատ առաջադիմությունը: Դուրս մնացած ուսանողների թիվը վերջին հինգ տարիներին տատանվում է 1-3%-ի միջակայքում, վերականգնվածների թիվը ևս այդ միջակայքում է: Հեռացումների քանակը նվազեցնելու համար ուսանողների համար քոլեջում իրականացվում են խորհրդատվություններ, հավելյալ պարապմունքներ:

Քոլեջում ուսանողների կրթական կարիքների վերհանման համար կիրառվում են հարցումները, հանդիպումերն ուսանողների հետ, ինչպես նաև ուսանողները հնարավորություն ունեն դիմելու կուրսղեկներին ու ավագներին: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ վերհանված խնդիրները քննարկվել են քոլեջում և փորձել են գտնել դրանց լուծումներ: Այսպես օրինակ, ուսանողների առաջարկով կուրսղեկների հետ քննարկման արդյունքում փոխվել են որոշ մոդուլների դասավանդման մեթոդները:

Ուսանողների կարիքների վերհանման գործընթացում կարևոր օղակ է նաև Ուսանողական խորհուրդը: Օրինակ ավագների միջոցով Ուսանողական խորհուրդը պարզել է, որ ուսանողները համակարգչային լսարանի կարիք ունեն, բարձրացրել է այդ հարցը, և այն ստացել է լուծում: Ներկայումս քոլեջում առկա է երկու համակարգչային լսարան՝ կահավորված 30 համակարգչով:

Քոլեջում իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց: Ըստ քոլեջի կողմից իրականացված հարցումների՝ ուսանողների 61.5%-ը կարևորում են խորհրդատվական պարապմունքների իրականացումը, և նրանց 65.2%-ն ընդգրկված է այս պարապմունքներում:

Քոլեջում իրականացվում են ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ, ըստ անհրաժեշտության, դասախոսները պատրաստակամ են նաև աջակցելու ուսանողներին, պատասխանելու նրանց հարցերին իրենց խորհրդատվության օրը կամ դասերից հետո: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ նաև ամռանը հավելյալ պարապմունքներ են անցկացվել «Հագուստի մոդելավորում» մասնագիտության շրջանակներում և ստացած կարողություններն

ուսանողները կիրառել են հայկական տարազներին նվիրված ցուցահանդեսի հագուստները պատրաստելիս։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով։ Վարչական աշխատակազմին դիմելու հստակ ժամանակացույց քոլեջում սահմանված չէ՝ հաշվի առնելով ուսանողների համեմատաբար քիչ թվաքանակի պարագայում վարչական աշխատակիցներին դիմելու հասանելիությունը։ Քոլեջը հարցումների միջոցով գնահատել է նաև վարչական անձնակազմից ուսանողների բավարարվածությունը։ Ըստ այդմ, ուսանողների 63.2%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, իսկ 94.2%-ը բավարարված է այդ ծառայություններից։

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստող աշխատանքները համակարգում է պրակտիկայի, կարիերայի և արտաքին կապերի բաժնի պատասխանատուն։ Պատասխանատուն կազմակերպում է մի շարք միջոցառումներ՝ ուսանողներին և շրջանավարտներին տեղեկացնելով դրանց մասին սոցիալական ցանցերի միջոցով։ Այսպես օրինակ քոլեջի ուսանողները մասնակցում են կարիերայի հնարավորությունների ծանոթացմանը նվիրված էքսպոների, աշխատանքի տոնավաճառների։

Քոլեջը կնքել է 28 համաձայնագրեր գործընկեր հաստատությունների հետ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման շուրջ։ Պրակտիկայի, կարիերայի և արտաքին կապերի բաժնի պատասխանատուն պարբերաբար թափուր աշխատատեղերի վերաբերյալ իրազեկում է սոցիալական ցանցերի միջոցով շրջանավարտներին, այդ թվում նաև քոլեջում առկա թափուր հաստիքների վերաբերյալ։ Շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քոլեջն ունեցել է 158 շրջանավարտ. շրջանավարտներից 73-ը շարունակում են ուսումը բուհերում, 46-ը աշխատում են, որից 7-ը իրենց մասնագիտությամբ։ Զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն դիրքերում են «Զբոսաշրջություն» և «Սպասարկման կազմակերպում» մասնագիտությունները։ Փորձագիտական այցից և էլեկտրոնային հարցաշարի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալները սկսել է հավաքագրել վերջին երեք տարիների ընթացքում (մեկնարկը՝ 2019-2020 ուստարի)։

Քոլեջում ուսանողների իրավունքների ներկայացման ու պաշտպանության համար ձևավորվել է Ուսանողական խորհուրդ։ Ուսանողական խորհուրդն իր կողմից նախատեսվող միջոցառումներն ամրագրում է տարեկան աշխատանքային պլաններում՝ նշելով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետները և պատասխանատուներին։ ՈւԽ-ն քննարկում է իր նիստերի ժամանակ ուսանողների կարիքները և խնդիրները, բացի այդ քննարկում են տարբեր միջոցառումների իրականացման շուրջ հարցեր և պլանավորում դրանց իրականացումը։ Քննարկման արդյունքներն ամփոփվում են ՈւԽ նիստերի արձանագրություններում։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈւԽ-ը իր նիստի ընթացքում կուրսերի ավագներից պարզել է, որ ուսանողները կարիք ունեն էլեկտրոնային գրատախտակի, և այդ հարցը բարձրացնելով՝ ստացել են լուծում։ ՈւԽ-ը նախագահը նաև ներգրաված է Տնօրինական և Մանկավարժական խորհուրդներում։ Հաշվի առնելով խորհրդի նոր ձևավորված լինելու հանգամանքը՝ այս խորհուրդներում նախագահի կողմից բարձրացված հարցերի օրինակներ դեռ քոլեջում առկա չէին։ ՈւԽ-ը նաև ունի որոշակի բյուջե (70 000 ՀՀ դրամ) իր տարեկան միջոցառումների կազմակերպման համար։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի ղեկավարությունը պատրաստակամ է աջակցելու ուսանողներին իրենց

նախաձեռնություններն իրականացնելու ուղղությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ Ուսանողական խորհրդի աշխատանքների իրազեկման մասին միջոցառումներն ակտիվ ընթացք ունեն: ՈւԽ-ը օգնում է նաև ՈԱ պատասխանատուին հարցումների անցկացման և տեղեկատվության տարածման նպատակով:

Քոլեջը որոշակի քայլեր է իրականացնում ուսանողների հետազոտական կարողությունների զարգացման ուղղությամբ: Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից և դասալսումներից պարզ դարձավ, որ ուսանողներն իրականացնում են անհատական աշխատանքներ, հետազոտական բաղադրիչ առկա է նաև ավարտական աշխատանքներում: Այսպես, «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտությամբ ավարտական աշխատանքների շրջանակում ուսանողներն իրականացրել են ազգային տարազի ուսումնասիրություն, իսկ «Զբոսաշրջություն» մասնագիտության համար վերլուծել են ՀՀ զբոսաշրջային միջավայրը: Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հետազոտական առաջադրանքները համակարգված չեն տրամադրվում ուսանողներին, ինչպես նաև ամբողջովին արտացոլված չեն կրթական ծրագրերի փաթեթներում:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը գնահատվում է հարցումների, հանդիպումների և ֆոկուս խմբերի միջոցով: Վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից վերհանված խնդիրները հիմնականում վերաբերում են ռեսուրսների համալրմանը: Բարձրացված խնդիրներին արձագանքելով՝ քոլեջը բարելավել է իր ենթակառուցվածքները և լսարանային տեխնիկական հագեցվածությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում ներդրված են ուսանողների հավաքագրման ու ընդունելության հստակ մեխանիզմներ, ինչը նպաստել է ուսանողների թվի դինամիկ աճին ու նոր կրթական ծրագրերում ուսանողական համակազմի համալրմանը: Սոցիալական ցանցերի և ուսանողների միջոցով տեղեկատվության տարածումը հնարավորություն է տալիս ապագա դիմորդներին ծանոթանալու քոլեջի գործունեությանը:

Դրական հանգամանք է նաև, որ ուսանողների կարիքները գտնվում են հաստատության ղեկավար կազմի ուշադրության ներքո, ինչի շնորհիվ ուսանողները դյուրին կերպով կարողանում են բարձրացնել իրենց հուզող խնդիրները և բարելավել ուսումնական միջավայրը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև քոլեջում լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվությունների անցկացումը, որից օգտվում է ուսանողների մեծ մասը՝ բավարարված լինելով ստացված խորհրդատվությունների որակից: Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ կարևոր է շարունակել իրականացնել օտար լեզուների դասընթացները՝ նպաստելու ուսանողների լեզվաիմացության բավարար մակարդակի բարձրացմանը:

Ուսանողների կարիերային միտված միջոցառումները, տարաբնույթ էքսպոներին մասնակցությունը նպաստում են ուսանողների՝ հետագա աշխատանքի մասին պատկերացումների ձևավորմանը, ինչպես նաև աշխատանքի տեղավորմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը պետք է շարունակի ուշադրություն դարձնել շրջանավարտների զբաղվածության պարբերական ուսումնասիրությանը, շրջավարտների

բազայի հավաքագրմանն ու թարմացմանը՝ գնահատելու կրթական ծրագրերի արդյունավետությունը և վերհանելու հնարավոր խնդիրները:

Դրական է քոլեջի Ուսանողական խորհրդի գործունեությունը, ինչը նպաստել է ուսանողների խնդիրների քննարկմանն ու լուծման ուղիներ գտնելուն, ուսանողական միջավայրի ձևավորմանը ուսանողների հետաքրքրության շրջանակում տարբեր միջոցառումներ կազմակերպելու միջոցով:

Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև հետազոտական բոլոր առաջադրանքների արտացոլման անհրաժեշտությունը կրթական ծրագրերում՝ նպաստելու ուսանողների վերլուծական կարողությունների ձևավորմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողներին մատուցվող ծառայությունների շարունակաբար գնահատումը և այդ տվյալների հիման վրա բարելավումների իրականացումը կօգնի անընդհատ զարգացնել կրթական միջավայրը և նպաստել ուսանողների բավարարվածության ապահովմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում են ուսանողների հավաքագրման ու ընդունելության մեխանիզմներ, առկա են կրթական կարիքների վերհանման հնարավորություններ, քոլեջը շարունակաբար ռեսուրսներ է տրամադրում՝ բարելավելու կրթական միջավայրն ու ուսանողներին մատուցվող ծառայությունները, իրականացվում են խորհրդատվական և լրացուցիչ պարապմունքներ, գործում են կարիերային նպաստող ծառայություններ և ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին, ինչպես նաև առկա են ուսանողներին մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Հաստատության նախորդ՝ 2018-2023թթ.-ի և գործող՝ 2023-2028թթ.-ի ռազմավարական ծրագրերի տիրույթում է կադրային ներուժի զարգացումը: Մասնավորապես, գործող ՌԾ-ի՝ «Կառավարում և վարչարարություն» նպատակի իրագործման խնդիրներում առանձնացվել է «մանկավարժական համակազմի գործունեության արդյունավետության բարձրացումը»: Նշված խնդրի իրագործման համար որպես գործողություն սահմանվել է մանկավարժական համակազմի մասնագիտական գործունեության բարելավումը, իսկ որպես գործողության առաջընթացի գնահատման ցուցանիշ՝ «մշակված և գործող դասախոսական համակազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպման կանոնակարգ, 2023-2024 ուստարվանից սկսած տարեկան առնվազն 2 սեմինար քննարկումներ և վերապատրաստված 20% անձնակազմ»: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց

տվեցին, որ սահմանված նպատակի իրագործման համար 2023 թվականին մշակվել է «Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և որակավորման ծրագրի կազմակերպման կարգը», մեկնարկել են համապատասխան միջոցառումներ: Մասնավորապես, դասախոսական կազմի համար իրականացվել են օտար լեզվի և համակարգչային կարողությունների զարգացման դասընթացներ:

Դասախոսական կազմի և աշխատակիցների համալրման և հեռացման գործընթացները կարգավորվում են «Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի դասախոսական կազմի ձևավորման և ազատման կանոնակարգի» և «Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի ներքին կարգապահական կանոնների» համաձայն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում դասախոսների ընտրությունը մրցութային կարգով չի իրականացվում:

Դասախոսական կազմի համալրումը տեղի է ունենում հարցազրույցի միջոցով: Հարցազրույցին մասնակցում են քոլեջի տնօրենը, ՄՌԿ և ընդհանուր բաժնի պատասխանատուն, դասավանդվող մոդուլի կամ առարկայի գծով համապատասխան մասնագետներ:

Փորձագիտական ուսումնասիրությունների համաձայն՝ ՄՈՒՀ-ում ըստ կրթական ծրագրերի դասախոսների ներգրավման համար առաջնորդվում են ՊԿՉ-ով սահմանված նվազագույն պահանջներով, կարևորվում են մասնագիտական բարձր որակավորումը, աշխատանքային փորձառությունը, մասնագիտական վերապատրաստումները, լեզվի իմացությունը, նախորդ աշխատավայրերից բնութագրերը: Հարկ է նշել, որ, շեշտադրելով դասախոսների մասնագիտական բարձր որակավորումը, դասավանդման գործընթացում համատեղությամբ ներգրավվում են նաև համալսարանի դասախոսները: Դասալսումներից և մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողներին տրվող հանձնարարականները համահունչ են դասընթացի վերջնարդյունքներին և չեն համընկնում բուհում ուսանողներին տրվող հանձնարարականներին: Քոլեջի որոշ մասնագիտությունների, մասնավորապես «Հաշվապահական հաշվառում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրերի դեպքում, դասավանդող կազմում ընդգրկված են նաև պրակտիկ ոլորտում աշխատելու փորձառություն ունեցող մասնագետներ:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջում դասախոսական կազմը 36-ն է, որոնցից 13-ը՝ համատեղությամբ: Դասավանդող կազմն ունի բարձագույն կրթություն, 8 դասախոսներ ունեն նաև գիտական աստիճան: Դասավանդողներից երկուսը հանդիսանում են Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի շրջանավարտներ: Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսների մասնագիտական որակավորումները համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Փաստաթղթերի ուսումասիրությունից պարզ դարձավ նաև, որ դասախոսական կազմի ուսումնական ծանրաբեռնվածությունը ձևավորվում է հիմնականում 2-5 առարկաներով, իսկ մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսների մոտ առկա է նաև 8-12 մոդուլներով ծանրաբեռնվածություն:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում դասախոսների գնահատման կիրառվող հիմնական մեխանիզմներն են դասալսումները, ուսանողների գնահատումները և ֆոկուս-խմբային քննարկումները: Դասալսումների իրականացման նպատակով մշակվել և ներդրվել է «Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջի դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգ»: Առկա է

դասալսման համապատասխան ձևաչափ: Դասալսումներն իրականացվում են ամբիոնների վարիչների, փոխտնօրենի, որակի ապահովման պատասխանատուի կողմից՝ համաձայն պլան-ժամանակացույցի: Իրականացվում են նաև փոխադարձ դասալսումներ՝ փորձի փոխանակման նպատակով: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ թեև առկա են դասավանդման ներքին լավ փորձի օրինակներ, սակայն լավագույն փորձի փոխանակման և տարածման հստակ մեխանիզմներ քոլեջում դեռևս կիրառելի չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ դասալսումների արդյունքում դուրս բերված հիմնական խնդիրը դասախոսների մեթոդական պատրաստվածության անհրաժեշտությունն է, որի ուղղությամբ պլանավորվել է իրականացնել վերապատրաստումներ:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջում դասախոսների աշխատանքի գնահատման ևս մեկ մեխանիզմ է դասախոսների կատարած ուսումնամեթոդական աշխատանքների հաշվետվությունների ներկայացումը, որոնք տրվում են ուսումնական տարվա ավարտին ամբիոնների վարիչներին: Հաշվետվություններում դասախոսները ներկայացնում են տեղեկատվություն իրենց կողմից իրականացված գործնական աշխատանքների, դասախոսությունների, ուսանողների հետ տարվող տարաբնույթ աշխատանքների վերաբերյալ: Ուսանողների կողմից դասախոսների գնահատումները ևս իրականացվում են համապատասխան մշակված հարցաթերթի: Հարցումները կազմակերպվում են Որակի ապահովման պատասխանատուի կողմից: Քոլեջում կիրառելի է նաև դասախոսների կարիքների գնահատման մեխանիզմ. դասախոսական կազմը մասնակցում է որակի ապահովման պատասխանատուի կողմից իրականացվող հարցման՝ գնահատելով իր բավարարվածությունը քոլեջի տարբեր գործընթացներից: Դասախոսները իրենց առաջարկները ներկայացնում են նաև մանկավարժական խորհրդի և ամբիոնների նիստերի քննարկումներին: Օրինակ, ամբիոնների նիստերին քննարկվում են կրթական ծրագրերին, դասավանդվող դասընթացներին առնչվող հարցեր, դասընթացների տեսական և գործնական ժամերի բաշխման փոփոխություններ:

Փորձագիտական ուսումնասիրությունները պարզեցին, որ քոլեջում կարևորվում է դասավանդող կազմի մասնագիտական որակավորման բարձրացումը, դասավանդման արդյունավետության բարելավումը, վերապատրաստումները՝ առավել մրցունակ դառնալու նպատակով: Ուստի այդ ուղղությամբ քոլեջում 2023-2024 ուստարում մեկնարկել է վերապատրաստման ծրագիր, որին ընդգրկված է եղել դասախոսական կազմի 14%-ը: Վերապատրաստումները նպատակ ունեն աջակցելու դասախոսական կազմի մեթոդական և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հմտությունների կատարելագործմանը: Քոլեջը կարևորում է նաև դասախոսների օտար լեզվի իմացության բարելավումը, որը նպատակաուղղված է օտար լեզվով կրթական ծրագրի ներդրմանը, ինչով էլ պայմանավորված իրականացնում է նաև դասախոսական կազմի օտար լեզվի վերապատրաստում: Համաձայն քոլեջի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ նշված վերապատրաստմանն ընդգրկված են եղել 12 դասախոսներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերապատրաստումները կրելու են շարունակական բնույթ, և առկա է առաջիկա նախատեսվող վերապատրաստման դասախոսների առանձնացված ցանկ: Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջի համագործակցությունների շրջանակում դասախոսների համար երբեմն իրականացվում են փորձի փոխանակման և վարպետաց դասեր գործատուների կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մասնագիտական

վերապատրաստումները դասախոսների նախաձեռնությամբ են, որոնք իրենց մասնագիտական գիտելիքները զարգացնում են տարբեր կոնֆերանսներին, սեմինարներին, վերապատրաստումներին ընդգրկվելով: Ինչպես նաև, քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը ֆինանսական առանձին միջոցներ չի հատկացրել դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պլանավորվում է նաև դասախոսների մասնակցության ընդգրկում ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստումներին, սակայն այս ուղղությամբ դեռևս քայլեր չեն իրականացվել:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ դասախոսական կազմը վերջին տարիներին երիտասարդացման միտում ունի: Մասնավորապես, 2021-2022 և 2022-2023 ուստարիներին 20-35 տարիքային խմբի դասախոսական կազմում եղել են 2 դասախոս իսկ 2023-2024 ուստարում՝ 7 դասախոս: Ներկայումս քոլեջում դասավանդողների միջին տարիքը 49 է: Դասախոսական կազմի կայունությունն ապահովվում է նաև համալսարանի դասախոսների ներգրավվման միջոցով: Նոր ընդունվող դասախոսներին աջակցում են ՈԱ պատասխանատուն, ավելի փորձառու դասախոսները՝ տրամադրելով համապատասխան մեթոդական աջակցություն: Այդուհանդերձ, քոլեջը դիտարկում է մենթորության իրականացման անհրաժեշտությունը և այդ ուղղությամբ ևս պլանավորում է որոշակի աշխատանքներ: Քոլեջն ունի նաև լրացուցիչ դասախոսական կազմ /պահուստային ռեզերվ/, որոնք կարող են ներգրավվել անհրաժեշտության դեպքում:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում գործում են դասախոսների խրախուսման որոշակի մեխանիզմներ, մասնավորապես՝ աշխատավարձի բարձրացում, պարգևավճարներ, պատվոգրեր: Խրախուսման նպատակը դասախոսների աշխատանքների արդյունավետության խթանումն է, աշխատանքների որակյալ իրականացումը: Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի աշխատանքների խրախուսման նպատակով քոլեջը վերջին տարիներին համապատասխանաբար 10% և 5% բարձրացրել է աշխատավարձերը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վարչական և ուսումնաօժանդակ կազմից ներքին համատեղությամբ քոլեջում դասավանդման գործընթացներում ներգրավված են 4 աշխատակիցներ՝ քոլեջի տնօրենի տեղակալը, Որակի ապահովման պատասխանատուն, ամբիոնների վարիչներ:

Ուսումնաօժանդակ և վարչական կազմի գործառույթները սահմանվում են պաշտոնի անձնագրերով, ներքին կանոնակարգերով և ընթացակարգերով: Ըստ ինքնավերլուծության՝ հաստատությունում վարչական և ուսումնաօժանդակ աշխատանքներն իրականացնում են 25 աշխատակիցներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի մոտեցումը դասախոսական կազմի համալրման ուղղությամբ, ինչը նպաստել է մասնագիտական բարձր որակավորում ունեցող դասավանդողների ներգրավմանը կրթական ծրագրերի վերջնարդյունքներին հասնելու համար: Դրական է նաև համալսարանի դասախոսական համակազմի ներգրավումը՝ դասավանդող կազմի կայունության ապահովման տեսանկյունից: Դասախոսական կազմում ոլորտի պրակտիկ մասնագետների ներգրավումը նպաստում է աշխատաշուկայի պահանջներին և փոփոխություններին համարժեք ուսումնառության

իրականացմանը՝ ուսանողներին տրամադրվող առաջադրանքները մոտեցնելով իրական շուկայի խնդիրներին: Փորձագիտական խումբը գտնում է, որ գործատուների ներկայացուցիչների և պրակտիկ ոլորտի մասնագետների ավելի լայն շրջանակի ներգրավումը բոլոր կրթական ծրագրերի դասավանդման գործընթացում կնպաստի դասախոսական կազմի շրջանում փորձի փոխանակմանը, ուսանողներին տրամադրվող առաջադրանքների գործնական բաղադրիչի ավելացմանը:

Փորձագիտական խմբի դիտարկմամբ դրական են քոլեջում դասախոսական կազմի գնահատման ներդրված մեխանիզմները, որոնք նպաստում են դասախոսների աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես, դասալսումները նպաստել են դասավանդման հմտությունների բարելավմանը, աջակցել են դասախոսների մեթոդական պատրաստվածությանը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը կարևորում է, որ լավագույն փորձի վերհանման, տարածման մեխանիզմներ ևս ներդրվեն և կիրառվեն քոլեջում՝ նպաստելով դասավանդման գործընթացի կատարելագործմանն ու փորձի փոխանակմանը, այդ թվում գործատուների ու արտաքին շահակիցների գործուն մասնակցությամբ:

Դրական են քոլեջի կողմից դասախոսական կազմի մասնագիտական որակավորման և աշխատանքների արդյունավետության բարելավման իրականացվող աշխատանքները, մասնավորապես՝ կազմակերպվող և նախատեսվող վերապատրաստման միջոցառումները, աշխատանքային միջավայրի բարելավման ջանքերը, խրախուսման որոշակի մեխանիզմների առկայությունը: Այս աշխատանքները որոշակիորեն նպաստել են դասախոսների կարողությունների զարգացմանը: Ադուհանդերձ, կարևոր է, որ քոլեջը մշակի մասնագիտական վերապատրաստումների և որակավորման բարձրացման առավել կայուն մեխանիզմներ՝ հատկացնելով համապատասխան նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Դիտարկելով քոլեջի մարդկային, նյութական ու ֆինանսական ռեսուրսների շրջանակը՝ փորձագիտական խումբը դրական է համարում հաստատության հանձնառությունը բուհի ռեսուրսների կիրառմամբ աջակցելու քոլեջի զարգացմանը, ինչը նպաստում է կայունության ձևավորմանը և քայլերի առավել հստակ պլանավորման դեպքում կարող է հանգեցնել դասախոսական կազմի ներուժի զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իր կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, ներգրավում է նաև բուհի դասախոսական կազմի ռեսուրսները՝ կայունության ապահովման և մասնագիտական համապատասխան որակավորմամբ մասնագետների ընդգրկման նպատակով, ունի դասախոսական կազմի գնահատման որոշակի մեխանիզմներ, դասախոսական կայուն կազմ և ռեզերվ, առկա են դասախոսական կազմի երիտասարդացման միտումներ, իրականացվում են դասախոսական կազմի աշխատանքային գործունեության բարելավման որոշ միջոցառումներ, ունի համապատասխան ուսումնաօժանդակ կազմ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի բազային քոլեջն իր 2023-2028թթ. զարգացման ռազմավարական ծրագրում որպես ռազմավարական առաջնահերթություն է դիտարկում արդիական հետազոտությունները և նորարարությունը: Քոլեջը նպատակ է դրել բարելավել ուսանողների հետազոտական կարողությունները, առանձնացրել է խնդիր՝ բարձրացնել քոլեջում հետազոտական գործունեության արդյունավետությունը, վերջինիս իրագործման համար սահմանել գործողություններ և առաջընթացի գնահատման ցուցիչներ: Նպատակների և խնդիրների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ սահմանված որոշ գործընթացներ բավական հավակնոտ են՝ համադրելով քոլեջի տրամադրած ռեսուրսների ու պլանավորման հետ: Այսպես օրինակ, «Կատարել համատեղ հետազոտական աշխատանքներ տեղական և արտասահմանյան գիտական կենտրոնների հետ» գործողության համար ցուցիչ է սահմանել «Համատեղ հավանական հետազոտական թեմաներ/իրականացված առնվազն 2 համատեղ հետազոտությունների հաշվետվություններ/: Այս ուղղությամբ արդյունքներ քոլեջը դեռ չունի:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ԶՌԾ-ով նախատեսված գործողությունների մեծ մասը դեռևս պլանավորման փուլում են: Միևնույն ժամանակ բյուջեում ֆինանսական միջոցներ հատկացված չեն հետազոտական գործունեության իրականացման համար:

Քոլեջում առկա չէ հետազոտության զարգացմանը միտված հստակ քաղաքականություն, տեսանելի չեն քոլեջի հետաքրքրությունները հետազոտության ոլորտում: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջը հստակ չի սահմանել, թե որոնք են իր հետազոտական ուղղությունները, դրանք որոշակիորեն տեսանելի են միայն ամբիոնների մակարդակում, որը երևում է դասախոսների կողմից հետազոտական աշխատանքների իրականացմամբ իրենց մասնագիտությունների շրջանակում:

Հարկ է նշել, որ քոլեջի հետազոտական աշխատանքների ընթացիկ իրականացումը և վերահսկողությունը կատարվում է որակի ապահովման պատասխանատուի, ամբիոնների վարիչների և ուսումնական մասի կողմից:

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունը և մասնագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ ուսանողներին տրամադրվում են վերլուծական, հետազոտական և ստեղծագործական առաջադրանքներ: Ուսանողներն իրականացնում են դիպլոմային աշխատանքներ, ռեֆերատներ, դասախոսները հանձնարարում են ինքնուրույն աշխատանքներ, սակայն դրանց իրականացումը դեռ ինստիտուցիոնալ և պարտադիր բնույթ չի կրում և ներառված չէ ուսումնական պլաններում:

Ուսումնառության գործընթացում հետազոտական բաղադրիչի ավելացման նպատակով քոլեջի կողմից մշակվել է «Մ. Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջի միջին մասնագիտական կրթական ծրագրի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման» կարգ: Հետազոտական աշխատանք ներառող մասնագիտական դասընթացների ցանկը սահմանում է մասնագիտական ամբիոնի վարիչը և հաստատվում է

մանկավարժական խորհրդի կողմից: Հետազոտական աշխատանքը ներառվում է միայն մասնագիտական դասընթացներում: Կարգում մանրամասն ներկայացված են ռեֆերատի կատարման պահանջները և գնահատման չափանիշները: Փորձագիտական այցից և հետազոտական աշխատանքների ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դրանցում իրականացման համար սահմանված պահանջները և չափանիշները պահպանված չեն, բացակայում են ուսումնասիրությունները, եզրահանգումները և աղբյուրների հիշատակումը:

Քոլեջում դիպլոմային աշխատանքի իրականացում նախատեսված է «Հագուստի մոդելավորում և նախագծում» ՄԿԾ-ի շրջանակներում: Դիպլոմային նախագծի (աշխատանքի) թեմաները սահմանվում են մասնագիտական ամբիոնի կողմից: Հարկ է նշել, որ ուսանողներն հնարավորություն ունեն ընտրել ուսումնասիրությունների իրենց հետաքրքրող թեմաները: Դիպլոմային աշխատանքների դիտարկումներց պարզվեց, որ դրանք հիմնականում տեսական նյութի ուսումնասիրություն են, թույլ է արտահայտված դրանցում հետազոտական կողմը:

Քոլեջում դասավանդող հիմնական դասախոսական կազմի 22%-ը ունեն գիտական աստիճան, առկա են տպագրված հոդվածներ, ձեռնարկներ: Այսպես, վերջին հրապարակումներից կարելի է առանձնացնել՝ «Մթնոլորտային կոագուլյացիայի բացահայտումը» գյուտը (հեղինակ՝ Ա.Մ. Գրիգորյան), «Դարձվածաբանություն» մեթոդական ցուցումներ (հեղինակ՝ Լ. Հայրապետյան), «Ինտերիերի և էքստերիերի ճարտարապետական գեղարվեստական մոդելավորումը» (հեղինակ՝ Ա.Մ. Գրիգորյան) և այլն: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզվեց, որ դրանք որպես ուսումնառության նյութ, ներդրված չեն համապատասխան ՄԿԾ-ներում:

Քոլեջում առկա են ուսանողների հետազոտական աշխատանքների խրախուսման որոշ մեխանիզմներ, սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ առայժմ խրախուսման ձևեր չեն կիրառվել: Քոլեջում դասախոսների հետազոտական գործունեության ծավալման քաղաքականություն առկա չէ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ հետազոտությունը և նորարարությունը քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրի տիրույթում են, և քոլեջը կարևորում է հետազոտական աշխատանքներում ուսանողների կարողությունների բարելավման անհրաժեշտությունը: Փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտական ուղղությամբ նպատակներին հասնելու համար հաստատությանն անհրաժեշտ է քոլեջի մակարդակում ունենալ հետազոտության միատեսակ ընկալում և հետազոտական աշխատանքների հստակ պլանավորում:

Չնայած քոլեջում առկա են ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության փոխկապակցման տարրեր, սակայն այդ գործընթացը համակարգված բնույթ չի կրում: Քոլեջում առկա են հետազոտական-վերլուծական հանձնարարականների լավ փորձի օրինակներ, սակայն հետազոտության խթանման համապատասխան կայուն մեխանիզմների բացակայությունը վտանգում է դրական փորձի զարգացումն ու տարածումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ իրականացված կրթական ծրագրերի շրջանակներում ՈԱՇ-ին համահունչ հետազոտական խնդիրների սահմանումը, քոլեջի մոտեցման հստակեցումը հետոզոտական աշխատանքների իրականացման ուղղությամբ կնպաստի վերլուծական բաղադրիչի ավելացմանը կրթական ծրագրերում:

Քոլեջի կողմից սահմանված հետազոտական նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է, որ դասավանդողների կատարած հետազոտությունները փոխկապակցվեն

ամբիոնային ուղղություններին: Իրականացված հետազոտությունների արդյունքների ներդրումը ուսումնառության նյութերում և ուսանողների առաջադրանքներում կնպաստի ուսանողների վերլուծական-քննադատական մտածողության ձևավորմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեության ծավալման, դրանցում ընդգրկման, խրախուսման մեխանիզմների բարելավումը կնպաստի ուսանողների հետազոտական գործունեության արդյունավետությանը, ինչպես նաև դասախոսների մասնագիտական կատարելագործմանը: Փորձագիտական խումբը արժևորում է դասախոսների կողմից իրականցված գիտական աշխատանքները, այդուհանդերձ կարևորում է, որ իրականացվեն նաև միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություններ դրանք տեղայնացնելու և բարելավելու կրթական ծրագրերը, հատկապես որ միջազգայնացումը ևս քոլեջի ռազմավարական նպատակների տիրույթում է:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչն ամբողջապես ներդրված չէ, չեն գործում դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման հստակ մեխանիզմներ, ուսումնառության գործընթացում հետազոտական արդյունքների ներդրման գործիքներն անկատար են, դասախոսների կատարած հետազոտական աշխատանքների արդյունքները լիարժեք չեն ներդրվում ուսումնառության գործընթացում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջն իր 2023-2028թթ. ՌԾ-ում խնդիր է դրել համալրել և արդիականացնել նյութատեխնիկական ռեսուրսները: Խնդրի իրագործման համար որպես միջոցառում ՄՈՒՀ-ը նախատեսել է իրականացնել նյութատեխնիկական բազայի արդիականացման գործընթաց, գնահատել նյութատեխնիկական ռեսուրսների առկա վիճակը, իրականացնել լսարանների, մասնագիտացված կաբինետների, լաբորատորիաների վերանորոգման ու կահավորման գործընթացներ, պարբերաբար արդիականացնել տեխնիկական միջոցները, իսկ ֆինանսական կայունության տեսանկյունից՝ մշակել ֆինանսական հավելյալ աղբյուրների ներգրավման մեխանիզմներ, մշակել և իրականացնել ֆինանսական հոսքերը խթանող ծրագրեր (օտար լեզվով ԿԾ-ի իրականացում, դրամաշնորհային առնվազն մեկ ծրագիր իրականացում):

Քոլեջը տեղակայված է Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի 3 հարկանի մասնաշենքում. հաստատությունն ունի 4125մ^2 ընդհանուր մակերեսով տարածք: Հաստատությունում առկա է 14 լսարան, երկու կարի արհեստանոց, երկու նկարչական արվեստանոց, մեկ փակ մարզադահլիճ և մեկ ընթերցասրահ-դահլիճ: Համակարգչային

լսարանները 2-ն են, որոնք հագեցված են 30 համակարգիչներով: Քոլեջի լսարաններում առկա են պրոեկտորներ և ինտերակտիվ էկրաններ:

Քոլեջում ներքին շահակիցների կարիքների գնահատման հիման վրա հաստատությունում ներկայումս առկա է սննդի կետ:

Քոլեջի գրադարանում առկա է շուրջ 5008 միավոր գրականություն, այդ թվում՝ դասագրքեր, գրքեր, մասնագիտական գրականություն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունը հիմնականում հայերենով է: Քոլեջի ֆինանսական միջոցների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ գրադարանի գրքային ֆոնդի համալրման համար հաստատությունը ֆինանսական միջոցներ չի նախատեսել: Գրադարանում գրքային ֆոնդի համալրումն իրականացվել է համագործակցությունների միջոցով, այսպես օրինակ՝ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության և Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության կողմից՝ հիմնականում պարսկերեն և ֆրանսերեն գրականության տրամադրմամբ: Քոլեջը 2016թ.-ից համագործակցում է Ազգային գրադարանի հետ. ՄՈՒՀ-ի ներքին շահակիցներն օգտվում են Ազգային գրադարանի ծառայություններից:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջի գրադարանը թվայնացված չէ: Էլեկտրոնային գրադարանների ու ցանցերի քոլեջը չի անդամակցում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքների, պրակտիկաների իրականացման համար քոլեջն օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները: Մասնավորապես՝ «Հագուստի մոդելավում և նախագծում» ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողները գործնական պարապմունքներն իրականացնում են Սասստեքս ՍՊԸ-ում, որտեղ էլ ծանոթանում են կարի մեքենաների աշխատանքի անվտանգության կանոնների պահպանմանը, ինչպես նաև շահագործում արտադրամասում առկա նոր կարի մեքենայասարքավորումները: 2023-2024 թթ. մեկնարկին ՄՈՒՀ-ին տրամադրվել են 5 կարի մեքենաներ Սասստեքս ՍՊԸ-ի կողմից: Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ նաև, որ քոլեջն իրականացրել է լսարանային ֆոնդի վերանորոգումներ, որոշ բարելավումներ:

Քոլեջի բյուջեի եկամուտներում պետական ֆինանսավորումից մուտքեր առկա չեն: Հաստատությանը ֆինանսական միջոցներ հիմնականում հատկացվում են Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի կողմից, իսկ ուսանողների վարձավճարներից բյուջեի մուտքերը կազմում են 45,5%-ը:

Քոլեջի 2023թ.-ի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվի համաձայն՝ ընդհանուր ծախսերի 55,5%-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին, ուսումնական ծախսերը կազմում են 0,06%, ընդհանուր ծախսերի 12,3% բաժին է ընկնում հիմնական միջոցներին, գրասենյակային, տնտեսական և ուսումնական ծախսերին՝ 0,65%, հարկերին՝ 6,6% գրադարանին՝ 0,014%, մնացած մասը հատկացվում է այլ ծախսերին:

Ըստ 2022-2023թթ. ՄՈՒՀ-ի հիմնական ուղղությունների բյուջեի բաշխման տվյալների՝ հետազոտական աշխատանքների, վերապատրաստումների համար քոլեջը դրամական հատկացումներ չի տրամադրել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրամաշնորհային ծրագրերի մասնակցության արդյունքում ստացվող եկամուտների նախադեպեր քոլեջում դեռ առկա չեն: Նախորդ երեք տարիներին քոլեջը չի իրականացրել ֆինանսական այլընտրանքային հոսք

ապահովող կարճաժամկետ ծրագրեր: ՄՈՒՀ-ը ֆինանսական մուտքեր ապահովելու համար նախատեսում է ներդնել օտար լեզվով կրթական ծրագիր՝ օտարազգի ուսանողների համար:

Քոլեջը կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկ չի իրականացրել: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ներկայումս բուհի ղեկավարությունը, կարևորելով քոլեջի զարգացումը, տրամադրում է անհրաժեշտ ռեսուրսները, իրականացնում ֆինանսական հատկացումներ կրթական ծրագրերի իրականացման կայունության ապահովման նպատակով: Վերջին տարիներին ուսման վարձի փոփոխություն չի արձանագրվել:

Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է էլեկտրոնային փոստի կիրառմամբ: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման համակարգ, հակահրդեհային համակարգ, պահակակետ, տեղադրված են տեսանկարահանող սարքավորումներ, բոլոր հարկերում առկա են տարհանման պլաններ, կրակմարիչներ:

Հաստատությունում բուժքրոջ պարտականություններն իրականացվում է համապատասխան որակավորում ունեցող դասախոսի կողմից՝ հասարակական հիմունքներով, վերջինս դասավանդում է «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներ: ՄՈՒՀ-ում բացակայում են թեքահարթակները: Անդրադառնալով մասնագիտական գործունեություն ծավալելիս անվտանգության կանոնների պահպանմանը (կարի մեքենաների, էլեկտրանէներգիայի հետ աշխատանք և այլն)՝ հարկ է նշել, որ անվտանգության կանոններին ուսանողները հիմնականում ծանոթանում են գործատուների միջավայրում կատարվող գործնական պարապմունքների և պրակտիկաների ընթացքում իրենց տրվող ցուցումների միջոցով:

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման համար կիրառվում են հարցումները: 2023-2024 ուստարվանից քոլեջն իրականացրել է ռեսուրսներից բավարարվածության առցանց հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում, որոնց արդյունքներով ուսանողների և դասախոսների շուրջ 83,3%-ը շենքային, լսարանային ու սպորտդահլիճի պայմաններից ունեն բավարարվածության բարձր մակարդակ: Հարցումների արդյունքում բարելավվել են ռեսուրսները, սկսել է գործել քոլեջի սննդի կետը, ձեռք են բերվել համակարգիչներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջն ունի համապատասխան նյութատեխնիկական բազա, ինչը հնարավություն է տալիս արդյունավետ իրականացնել կրթական ծրագրերը՝ ապահովելու սահմանված վերջնարդյունքները: Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ քոլեջը նյութատեխնիկական որոշ բացեր լրացնում է գործատուների բազայի համատեղ կիրառմամբ՝ պրակտիկ դասընթացները կազմակերպելով համապատասխան կազմակերպություններում, ինչը նպաստում է ուսանողների մոտ պրակտիկ հմտությունների ձևավորմանը: Գործնական պարապմունքները և պրակտիկաները գործատուների միջավայրում անցկացնելը նպաստում է նաև իրական աշխատանքային պայմաններին ծանոթանալուն ու հնարավորությանն աշխատելու ժամանակակից սարքավորումներով ու միջոցներով: Դրական է, որ քոլեջի ռեսուրսները շարունակաբար

համալրվում են, սակայն այս համատեքստում փորձագիտական խումբը գտնում է, որ ռեսուրսային պահանջների ամբողջական գնահատումը, դրա հիման վրա համալրման իրականացումը կնպաստի կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ձևավորմանը: Անդրադառնալով քոլեջի գրադարային ռեսուրսներին, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի քայլեր ձեռնարկելու մասնագիտական օտարալեզու գրականությամբ գրադարանը համալրելու, ինչպես նաև առցանց գրադարանային ցանցերին անդամակցելու ուղղությամբ՝ հաշվի առնելով նաև քոլեջի նպատակադրումն օտարալեզու կրթական ծրագիր իրականացնելու ուղղությամբ:

Անդրադառնալով քոլեջի ֆինանսական կառավարմանը և դրական գնահատելով բուհի հանձնառությունն ապահովելու քոլեջի զարգացման նպատակով տրամադրվող ռեսուրսները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջին անհրաժեշտ է գնահատել իր կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ու բավարար ֆինանսական ռեսուրսները: Քոլեջի դասավանդող կազմի ներուժի կիրառմամբ լրացուցիչ դասընթացների անցկացումը, դրամաշնորհներին դիմելը կարող է նպաստել ֆինանսական աղբյուրների բազմազանեցմանը, ինչը կհանգեցնի բուհից և ուսանողական վարձավճարներից ֆինանսական կախվածության նվազեցմանը:

Կարևորելով ուսանողների անվտանգ կենսագործունեության ապահովումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը պետք է ուշադրություն դարձնի առկա մոդուլներից բացի, գործնական բնույթ ունեցող մյուս մոդուլներում ևս ուսանողներին հետադարձ կապ տրամադրելուն անվտանգության պահպանման կանոնների ուղղությամբ խորհրդատվության տրամադրմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջում ռեսուրսների կիրառելիության ու արդյունավետության գնահատման մեխանիզմների ներդրումը, ինչը նպաստել է նոր ռեսուրսների ձեռքբերմանն ու բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ իր կրթական ծրագրերն իրականացնելու համար քոլեջն ունի բավարար ռեսուրսներ, շարունակաբար համալրում է իր ռեսուրսները, օգտագործում է նաև գործատուների ռեսուրսները, ֆինանսներ է հատկացնում ենթակառուցվածքների լավարկման ու կրթական ծրագրերի իրականացման կայունության ապահովման նպատակով, ներդրել է ռեսուրսների հասանելիության ու արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի կազմակերպական կառուցվածքի վերանայման և վերակազմավորման գործընթացների շրջանակում ներքին

հաշվետվողականության համակարգը դեռևս ձևավորման փուլում է, քոլեջի կողմից սահմանվել են հաշվետվողականության մեխանիզմներ: Մասնավորապես, կառուցվածքային միավորները տալիս են իրենց տարեկան աշխատանքների հաշվետվություն: Քոլեջի տնօրենը քոլեջի գործունեության տարեկան հաշվետվությունը ներկայացնում է Ընդհանուր ժողովին: Հաշվետվությունն ընդգրկում է ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն, մասնավորապես՝ ներկայացված են տվյալներ քոլեջի ուսանողական և դասախոսական համակազմի, ըստ մասնագիտությունների ընդունելության դինամիկայի, իրականացվող կրթական ծրագրերի, կառուցվածքային միավորների գործունեության վերաբերյալ, ինչպես նաև որակի ապահովման համակարգի իրականացրած հարցումների արդյունքների վերլուծությունները: Հաշվետվությունն ավարտվում է եզրակացություններով և համապատասխան բարելավման առաջարկություններով: Քոլեջի կառուցվածքային միավորների հաշվետվությունները, ինչպես ցույց տվեցին փաստաթղթերի ուսումնասիրությունները, հիմնականում նկարագրական բնույթի են:

Քոլեջն արտաքին հաշվետվություն ներկայացնում է միայն ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ իրականացվող կրթական ծրագրերի լիցենզիաների վերաբերյալ: Քոլեջում առկա են ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և շահակիցներին տեղեկատվության հասանելիությունն ապահովող գործիքներ՝ ֆեյսբուք, ինստագրամ սոցիալական հարթակներ և պաշտոնական կայքէջ: Քոլեջի 2023-2028թթ. ռազմավարական խնդիրների շրջանակում է եղել կառավարման համակարգում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդնումը, որի իրականացման ցուցանիշ է սահմանվել կայքէջի գործարկումը: Արդյունքում 2023թ.-ի նոյեմբերից գործարկվել է արդիականացված եռալեզու կայքէջ: Համաձայն ինքնավերլուծության, կայքէջի դիտումները կազմել են 135000: Կայքէջի միջոցով շահակիցներին հասանելի են քոլեջի ընթացակարգերը, հաշվետվությունները:

Հասարակության հետ հետադարձ կապ հաստատելու և տեղեկատվության հասանելիության գործիքներից է քոլեջի ֆեյսբուքյան հարթակը, որն ընդհանուր է համալսարանի և քոլեջի համար: Ֆեյսբուքյան էջում լուսաբանվում են ուսումնական գործունեությունը, կազմակերպվող միջոցառումները, ներկայացվում է տեղեկատվություն դիմորդների համար և այլն: Տեղեկատվությունը ֆեյսբուքյան էջում պարբերաբար թարմացվում է: Շահակիցներին տեղեկատվության տրամադրման գործիքներ են նաև քոլեջի էլեկտրոնային հասցեն, հրատարակվող տեղեկատվական բուկլետները, համացանցով և տարբեր ԶԼՄ-ներով տեղեկատվական տեսահոլովակների ցուցադրումը: Համաձայն ինքնավերլուծության՝ քոլեջի գործունեության լուսաբանման իրականացման հարթակներն են նաև ՀՀ Կրթական տեղեկատվական ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) կողմից կառավարվող կրթական միասնական տեղեկատվական հարթակը, dimord.emis.am, «Սփյուռ» տեղեկատվական համակարգը, www.yell.am կայքերը, Հայաստան տեղեկատուն՝ 38023 դիտումներ: Քոլեջի գործունեության մասին տեղեկատվության տարածման գործիք է նաև դիմորդների ներգրավման նպատակով դպրոցներ իրականացվող այցելությունները: Քոլեջում ներքին շահակիցներին տեղեկատվությունը հասանելի է դառնում ուսումնական մասի, մանկավարժական, տնօրենական խորհուրդների և ամբիոնների միջոցով:

Քոլեջում առկա է «Ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի քաղաքականություն»: Հետադարձ կապի շրջանակում իրականացվում են հարցումներ շրջանավարտների, ուսանողների, դասախոսական կազմի շրջանում, մշակվել են հետադարձ

կապի հարցաթերթեր: Մասնավորապես, դասախոսների շրջանում անցկացվող հարցումների նպատակը քոլեջի կողմից մատուցվող ծառայությունների ուժեղ և թույլ կողմերի բացահայտումն է, շրջանավարտների հետ կազմակերպվող հարցումները նպատակ ունեն դիտարկելու ուսումնական գործընթացի արդյունավետությունը, բացահայտել խնդիրները:

Քոլեջի 2023-2028թթ. զարգացման ռազմավարական ծրագրում նախատեսված խնդիրներից է՝ «ակտիվացնել և ամրապնդել հասարակությանը կրթական, մասնագիտական խորհրդատվության ծառայությունների տրամադրումը և դրանց համապատասխան գործողությունների իրականացման մեխանիզմները: Սակայն փորձագիտական ուսումնասիրությունները պարզեցին, որ քոլեջում հասարակությանը գիտելքիների (արժեքների) փոխանցմանը միտված միջոցառումներ չեն իրականացվում: Կազմակերպվող որոշակի միջոցառումները համակարգվում են պրակտիկայի, կարիերայի և արտաքին կապերի բաժնի պատասխանատուի կողմից: Մասնավորապես, ուսանողները մասնակցում են էքսպոների, աշխատանքի տոնավաճառների: Քոլեջում տարաբնույթ մշակութային միջոցառումներ կազմակերպվում են նաև Ուսանողական խորհրդի կողմից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջում ձեռնարկված քայլերը ներքին հաշվետվողականության մեխանիզմներ ներդնելու ուղղությամբ, որի արդյունքում քոլեջում ներդրվել են ներքին հաշվետվություններ: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը ընդգծում է հաշվետվությունների վերլուծության և գնահատման գործուն և արդյունավետ մեխանիզմների ներդնման անհրաժեշտությունը: Դա կնպաստի քոլեջում ներքնից վերև հաշվետվողականության հստակ և արդյունավետ համակարգի ձևավորմանը, լավագույն փորձի բացահայտմանը և բարելավման ուղղությունների նախանշմանը: Գովելի է ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվության տրամադրման և հասանելիության տարբեր հարթակների առկայությունը, ինչն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և տեղեկատվության հասանելիությունը հասարակությանը:

Դրական են նաև քոլեջի գործունեության, ընթացակարգերի հասանելիությունն ու թափանցիկությունն ապահովող հարթակի՝ պաշտոնական կայքէջի լավարկման աշխատանքները: Դրանք նպաստում են հաստատության գործընթացների թափանցիկությանը, տեղեկատվության հասանելիությանը հասարակության համար՝ այդպիսով նպաստելով նաև ճանաչելիության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում շահակիցների հետ հետադարձ կապի ձևավորմանը նպաստող որոշակի մեխանիզմների կիրառումը: Կիրառվող մեխանիզմները հնարավորություն են տալիս գնահատել տարբեր գործընթացների վերաբերյալ շահակիցների արձագանքները, վեր հանել թույլ կողմերը և նախանշել բարելավման ուղղությունները:

Դրական գնահատելով քոլեջում կազմակերպվող միջոցառումները, փորձագիտական խումբը, այնուամենայնիվ, շեշտադրում է, որ քոլեջը, օգտագործելով իր ներուժը, ներդնի հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման մեխանիզմներ՝ կազմակերպելով լրացուցիչ դասընթացներ՝ այդպիսով ապահովելով նաև ֆինանսական միջոցների ներհոսք հաստատության համար: Փորձագիտական խմբի դիտարկմամբ՝ հաստատությունում կուտակված արժեքները հասարակությանը փոխանցելու մեխանիզմների ներդրումը կնպաստի նաև քոլեջի ճանաչելիության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում ներդրված են հաշվետվողականության մեխանիզմներ, առկա են գործընթացների թափանցիկության և տեղեկատվության հասանելիության ապահովման մեխանիզմներ, աշխատանքների լուսաբանման համար կիրառվող սոցիալական հարթակներ, որտեղ պարբերաբար թարմացվում է քոլեջի մասին տեղեկատվությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Հաստատությունն իր ՌԾ-ում նպատակ է սահմանել քոլեջի միջազգայնացման մակարդակի բարելավումը: Նպատակին հասնելու համար խնդիր է դիտարկվում միջազգայնացման և փորձի փոխանակմանը միտված հստակ միջոցառումների ընդլայնումը: Այս նպատակին հասնելու համար քոլեջը նախատեսել է ակտիվացնել տեղական և միջազգային կրթական կազմակերպությունների հետ ինստիտուցիոնալ համագործակցությունը դասախոսների վերապատրաստման, համատեղ ծրագրերի ու միջոցառումների իրականացման միջոցով, հստակեցնել արտաքին կապերի գործառույթները, որոնել միջազգային դրամաշնորհային ծրագրեր՝ քոլեջի միջազգային տեսանելիության բարձրացման նպատակով:

Քոլեջում արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ աշխատանքներն իրականացնում է պրակտիկայի, կարիերայի և արտաքին կապերի պատասխանատուն: Նոր կապերի ու համագործակցությունների հաստատումն իրականացվում է նաև բուհի և քոլեջի ղեկավար կազմի կողմից:

Վերջին հինգ տարիների հաստատության գործունեության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ քոլեջը շարունակաբար ընդլայնում է համագործակցությունների շրջանակը՝ կրթական ծրագրերի ուղղություններով: Հաստատությունը ներկայումս համագործակցում է շուրջ 15 տեղական գործընկերների հետ: Համագործակցությունների շրջանակի դիտարկումը ցույց տվեց, համագործակցություններն ուղղված են հիմնականում ուսանողների պրակտիկաների կազմակերպմանը: Գործատուների հետ համագործակցությունը կրում է երկարամյա շարունակական բնույթ: ՄՈՒՀ-ի ամենախոշոր գործատու-գործընկերներից են Հոլիդեյ Ինը (Holiday Inn Express), Շելբի Տուրը (Shelby Travel), Սասստեքսը (Sasstex), Կառ տեգ գրուպը (KarTeg), Հարությունյան Արքիթեյքը (Harutyunyan Architects) և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ սպասարկման ու զբոսաշրջության ոլորտում հաստատությունը կապեր է հաստատել առավելապես մեծ ծավալներ ունեցող հյուրանոցների հետ, հյուրատների հետ համագործակցության հնարավորությունները նախատեսում է օգտագործել առաջիկայում: Քոլեջը համագործակցում է նաև ՀՀ-ում գործող դպրոցների, քոլեջների հետ, իրականացնում համատեղ միջոցառումներ ու փորձի փոխանակմանն ուղղված հանդիպումներ:

Փորձագիտական այցից պարզ պարձավ, որ թեև քոլեջում առկա է գործատուների հետ համագործակացության լայն շրջանակ, սակայն քոլեջի դասավանդման գործընթացում

գործատու դասախոսները ներգրավված են ոչ բոլոր կրթական ծրագրերում: Տեղական գործատուների հետ համագործակցության արդյունքում քոլեջն օգտագործում է գործատուների ռեսուրսները և արտադրական միջավայրը նաև գործնական պարապմունքների ժամանակ ռեսուրսները համատեղ օգտագործելով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ն ունի որոշակի փորձառություն նաև միջազգայնացման գործընթացում: 2024թ.-ի ապրիլին Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջի և Պանացեա համայնքային քոլեջի (Վրաստանի Հանրապետություն) միջև կնքվել է համագործակցության համաձայնագիր: Համաձայնագիրը միտված է մասնագիտական կրթության, գիտահետազոտական աշխատանքների, համատեղ նախագծերի իրականացման, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակման ոլորտներում համագործակցության հիմքեր ստեղծելուն:

ՄՈՒՀ-ում դեռևս քայլեր չեն իրականացվել «Էրազմուս+» ծրագրերին մասնակցելու ուղղությամբ: Ուսանողների և դասախոսների՝ շարժունության ծրագրերին մասնակցության օրինակներ դեռևս առկա չեն:

Անդրադառնալով ներքին շահակիցների՝ օտար լեզուների տիրապետմանը՝ կարելի է նշել, որ ըստ ինքնավերլուծության տվյալների՝ դասավանդողների 100%-ը, վարչական աշխատակիցների՝ 100%-ը, ուսանողների 82%-ը տիրապետում են օտար լեզուներին (ռուսերեն/անգլերեն): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ լեզվաիմացության գնահատում ըստ մակարդակների քոլեջը չի իրականացրել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ լեզվական կարողությունների զարգացման և օտար լեզվի իմացության բարելավման նպատակով ՄՈՒՀ-ի դասախոսական կազմը մասնակցել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան կողմից կազմակերպված վերապատրաստմանը:

Կրթական ծրագրերին նվիրված մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերում օտար լեզվի (անգլերեն) համար նախատեսված ժամաքանակը ավելացվել է: Այսպես օրինակ, «Սպասարկման կազմակերպում» ՄԿԾ-ում օտար լեզվի (անգլերեն) ժամաքանակը նախատեսված է 72 ժամ 66-ի փոխարեն: Սույն մասնագիտության շրջանում ռուսաց լեզվի ուսուցման համար հատկացվել է նաև պահուստային 60 ժամ: «Հագուստի մոդելավորում և նախագծում» ՄԿԾ-ի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ռուսաց լեզվի ուսուցման համար հատկացվել է 130 ժամ 72-ի փոխարեն: «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության պետական ամփոփիչ ատեստավորման հարցաշարերում ներառված են օտար լեզվով (անգլերեն) հարցեր:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը նախատեսում է ներդնել մեկ օտարալեզու կրթական ծրագիր: Ծրագրի ներդրման համար քոլեջը ձևավորել է օտար լեզվին տիրապետող դասախոսների ցանկ, նոր դասախոսներին ընդունելիս ևս հաշվի է առնում օտար լեզուներին տիրապետելու հանգամանքը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը կարևորում է արտաքին կապերի զարգացումը, հզորացումը, ինչը նպաստել է տեղական կազմակերպությունների հետ կապերի հաստատմանը: Արտաքին կապերի հաստատման ու խորացման ընթացակարգերի ձևավորումը, կանոնակարգումը կնպաստեն գործընթացների արդյունավետության բարձրացմանը և այս ուղղությամբ քոլեջի սահմանած ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն ակտիվ համագործակցություն է ծավալում տարածաշրջանի գործատուների հետ, ինչը

հնարավորություն է տալիս քոլեջի ուսանողներին մասնակցել պրակտիկաների, գործատուի միջավայրում ծանոթանալ աշխատանքային իրական պայմաններին: Գործատուների հետ համատեղ ռեսուրսների կիրառումը լրացուցիչ հնարավորություն է քոլեջի համար համատեղ կիրառելու գործատուների ռեսուրսները, ինչը նպաստում է ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական այլ հաստատությունների հետ ձևավորված կապերը կարող է օգտագործել նաև կրթական ծրագրերի համեմատական վերլուծության համար, ինչը հնարավորություն կտա վեր հանել լավագույն փորձը ու ուղիներ գտնել այն քոլեջում տեղայնացնելու համար: Կրթական ծրագրերի համեմատական վերլուծության ու լավ փորձի տեղայնացմանն ուղղված քայլերի իրականացումը հնարավորություն կտա քոլեջին ընդլայնել փորձի փոխանակման հնարավորությունները և նպաստել ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի կողմից լեզվաիմացության մակարդակի բարձրացման միտումը թե՛ դասախոսների, և թե՛ ուսանողների շրջանում: Փորձագիտական խումբը համարում է, որ ՄՈՒՀ-ը միջազգայնացման և արտաքին կապերի հաստատման ուղղությամբ ունի իրական հնարավորություններ և այս ուղղությամբ համապատասխան նախադրյալների ստեղծման տեսանկյունից կարևորում է աշխատակիցների լեզվաիմացության զարգացման ուղղությամբ առավել արդյունավետ և պարբերական միջոցառումների ձեռնարկումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը հաստատել է արտաքին կապերի շրջանակ, գործատուների հետ համագործացության շնորհիվ կազմակերպում է ուսանողների գործնական պարապմունքներն ու պրակտիկաները, փոխգործակցությունը նպաստում է ռեսուրսների համալրմանն ու ռեսուրսների համատեղ օգտագործմանը, հաստատությունում իրականացվում են անգլերենի իմացության բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Քոլեջն իր 2023-2028 թվականների ռազմավարական ծրագրում որպես խնդիր ամրագրել է քոլեջում որակի ապահովման մշակույթի կատարելագործումը: 2023թ. մշակվել է «Որակի ներքին ապահովում ձեռնարկը», որտեղ ամրագրված են ՈԱ մեխանիզմներն ու գործիքները: Քոլեջում որակի ներքին ապահովման քաղաքականության նպատակն է շարունակաբար բարձրացնել իրականացվող ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների արդյունավետությունը, ապահովել դրանց իրականացումը կրթության որակի ընդունված չափանիշներին համապատասխան:

Քոլեջը 2023թ. մշակել և ներդրել է որակի ապահովման համակարգը կարգավորող մի շարք փաստաթղթեր, դրանցից են՝ «Կրթական համակարգի որակի ապահովման հայեցակարգ», «Ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի քաղաքականություն և մեխանիզմներ», «Որակի ներքին համակարգի վերանայման քաղաքականություն և ընթացակարգեր»:

Որակի քաղաքականության իրականացման գործում կենտրոնական դերակատարը ՈԱ պատասխանատուն է, որի համար Քոլեջը 2023թ.-ին հատկացրել է աշխատասենյակ, մեկ դրույքաչափ հաստիք: Վերջինս նաև պատասխանատվություն է կրում բուհի որակի գործընթացների համար, հանդիսանում է նաև ամբիոնի վարիչ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը, բացի ՈԱ պատասխանատուի աշխատավարձի վճարումից, բյուջեում այլ առանձնացված ֆինանսներ չունի ՈԱ գործընթացների կազմակերպման համար:

ՈԱ պատասխանատուի գործառույթներն ամրագրված են պաշտոնի անձնագրում, ըստ որի պատասխանատուն իրականացնում է ՈՆԱ քաղաքականության բարելավմանն ուղղված ուսումնասիրություններ, մասնակցում է կրթության կառավարման գործընթացին վերաբերող կանոնակարգերի մշակման, վերանայման աշխատանքներին, կրթության կազմակերպման գնահատման գործընթացին, այդ թվում ներկայացնում է ուսումնամեթոդական, նյութատեխնիկական, կադրային ապահովվածության արդյունավետության վերաբերյալ համապատասխան առաջարկություններ:

ՈԱ պատասխանատուի աշխատանքային պլանի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այն ընդգրկում է քոլեջի ռազմավարական պլանավորման գործողությունների զգալի մասը:

ՈԱ պատասխանատուն տնօրենական և մանկավարժական խորհուրդների անդամ է: Փորձագիտական ացից պարզվեց, որ ՈԱ պատասխանատուն իր դիտարկումներն ու առաջարկություններն անմիջականորեն ուղղում է Քոլեջի ղեկավար կազմին:

Ըստ Քոլեջի ՈԱ քաղաքականության՝ որակի ապահովման գործընթացներում ներգրավված են Քոլեջի դասախոսական և վարչական համակազմի յուրաքանչյուր անդամ: Ներկայացված են հիմնական դերակատարների՝ ընդհանուր ժողովի, մանկավարժական խորհրդի, ՈԱ պատասխանատուի, ուսումնական մասի, ամբիոնների, ուսանողական խորհրդի, հաշվապահի պատասխանատվությունների բաշխումը: Շահակիցների մյուս խմբերը, այդ թվում Քոլեջի տնօրենը, տնօրենական խորհուրդը, պրակտիկայի, կարիերայի և արտաքին կապերի պատասխանատուն և արտաքին շահակիցները այս շրջանակում ներառված չեն:

Ներքին և արտաքին շահակիցները որակի ապահովման գործընթացներում ներգրավվում են հիմնականում հարցումների միջոցով: Ուսանողների և դասախոսների շրջանում առցանց եղանակով անցկացված հարցումները վերաբերում են ուսանողների բավարարվածությանը կրթական ռեսուրսներից, դասախոսների բավարարվածությանը մատուցվող ծառայություններից, ուսանողներին և դասախոսներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատմանը, դասախոսի դասավանդման արդյունավետությանը: Շրջանավարտների շրջանում հարցումն իրականացվել է առաջին անգամ, հարցմանը (շրջանավարտների որակի ապահովման արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցում) մասնակցել են ընդամենը 13 շրջանավարտ: Փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարցաթերթերում հարցերն այնպիսին են, որ որոշ դեպքերում չեն բացահայտում խնդիրները (այսպես օրինակ, ուսանողները տեղյակ են ձեր գիտական գործունեության և ձեռքբերումների մասին, Քոլեջում

ինչպես են գնահատում դասախոսի մասնագիտական որակները) կամ էլ կան հարցեր, որոնք կրկնվում են միևնույն հարցաթերթում (համացանցի հասանելիության մասին): Հարկ է նշել, որ Քոլեջում դասավանդող կազմի գնահատման համար կիրառվում են մի քանի մեխանիզմներ, այսպես դասախոսը գնահատվում է՝ հաշվի առնելով ուսանողների շրջանում հարցումների արդյունքները, դասալսումների արդյունքները, ինչպես նաև նրանց աշխատանքի ընթացիկ դիտարկումը:

Հարցումների արդյունքներն ամփոփվում են ՈԱ պատասխանատուի կողմից, ներկայացվում Քոլեջի տնօրենին և ամբիոններին, ապա նաև զեկուցվում Քոլեջի Տնօրինական խորհրդի նիստին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումների արդյունքներից ելնելով՝ բարելավվել է քոլեջի ռեսուրսային բազան, ձեռք են բերվել նոր համակարգիչներ և պրոեկտորներ: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գտնվելով որակի ապահովման համակարգի ներդրման գործընթացում՝ քոլեջը փորձել է մշակել գործընթացների կանոնակարգման հիմնական կարգերն ու ընթացակարգերը և պլանավորել կարիքների վերհանման գործընթացները: Այդուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ համակարգի արդյունավետության գնահատման հստակ ցուցիչներ դեռևս սահմանված չեն:

Քոլեջում որակի ապահովման ներքին համակարգը նոր է ներդրվել, ուստի դեռևս վերանայման գործընթաց չի իրականացվել: Միաժամանակ, քոլեջը մշակել է «Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն և ընթացակարգեր», ըստ որի ՈՆԱՀ վերանայումը ենթադրում է ՈԱ քաղաքականության, ընթացակարգերի, մարդկային, ժամանակային, ֆինանսական և նյութական ռեսուրսների վերլուծությունը և անհրաժեշտության դեպքում՝ վերանայումը:

Քոլեջն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն իրականացրել է առաջին անգամ: Քոլեջը ստեղծել է ինքնավերլուծության հանձնաժողով՝ տրամադրելով անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ աշխատանքների իրականացման համար: Վերջինիս կազմի մեջ ընդգրկված են վարչական աշխատողներ, դասախոսներ, ինչպես նաև աշխատաշուկայից մեկ ներկայացուցիչ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ հանձնաժողովում արշխատաշուկայից ներկայացուցչի ներգրավումը թույլ է տվել քոլեջի ընթացիկ գործընթացները վերլուծելիս ունենալ նաև արտաքին միջավայրի ազդակները: Ինքնավերլուծությունում որոշ չափով ներկայացվել են անհրաժեշտ հիմքեր, սակայն այն առավելապես նկարագրական բնույթ ունի և ներկայացնում է գործող, ինչպես նաև ներդրման փուլում գտնվող ընթացակարգեր:

Արտաքին և ներքին շահակիցները քոլեջի գործունեության մասին տեղեկատվությունը ստանում են հիմնականում պաշտոնական կայքի և Ֆեյսբուքյան էջի միջոցով: Քոլեջի կայքէջում հրապարակված են Քոլեջի գործունեության հիմնական փաստաթղթերը: Քոլեջի որակի ապահովման վերաբերյալ կայքում առանձին բաժին կա, որտեղ ներկայացված են ստորաբաժանման գործառույթները, որակի ապահովման ձեռնարկը, ՈԱ քաղաքականությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը կարևորել է որակի ապահովման համակարգի ներդրման անհրաժեշտությունը և քայլեր է ձեռնարկել գործընթացների պլանավորման ուղղությամբ, ինչը հիմքեր է ստեղծել որակի ապահովման գործընթացների կանոնակարգման համար: Գտնվելով որակի ապահովման համակարգի

ներդրման գործընթացում՝ վերջին մեկ տարվա ընթացքում կատարված ծավալուն աշխատանքները նպաստել են որակի ապահովման համակարգի տարրերի, շահակիցների շրջանում որակի մշակույթի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը:

Գնահատելի է, որ որակի ապահովման գործընթացները գտնվում են Քոլեջի ղեկավար կազմի ուշադրության կենտրոնում և քոլեջը տրամադրում է համապատասխան ռեսուրսներ որակի ապահովման գործընթացների արդյունավետ իրականացման նպատակով, ինչը նպաստել է որակի ապահովման պատասխանատուի հաստիքի համալրմանը, գործընթացների կազմակերպման նպատակով համապատասխան հանձնաժողովների ձևավորմանը: Հաշվի առնելով քոլեջի ռեսուրսների սակավությունը և առկա ներուժը ճիշտ ուղղորդելու կարևորությունը (մեկ պատասխանատուի կողմից մի քանի գործառույթների մեկտեղումը)՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի գնահատելու որակի ապահովման պատասխանատուի կողմից մի քանի գործառույթ կատարելու արդյունավետությունը: Հաշվի առնելով, որ որակի ապահովման պատասխանատուն որպես կրթական ծրագրի պատասխանատու ունի կրթական ծրագրի մշակման ու բարելավման գործառույթներ, իսկ որպես որակի պատասխանատու պետք է կարողանա գնահատել կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը պետք է գնահատի գործառույթների մեկտեղման արդյունավետությունը՝ խուսափելու շահերի բախման դեպքերից:

Դրական հանգամանք է, որ քոլեջը կիրառել է տվյալների հավաքագրման մեխանիզմներ, որոնք թույլ են տվել վեր հանել ուսանողների և դասախոսների որոշ կարիքներ և դրանց հիման վրա իրականացնել ռեսուրսային համալրումներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ տվյալների հավաքագրման մեխանիզմները բազմազանեցման և բարելավման կարիք ունեն՝ ուղղված քոլեջի զարգացման ուղղությունների վերաբերյալ համակողմանի տվյալների հավաքագրմանը: Կարևոր է, որ քոլեջում հստակ պլանավորվեն որակի ապահովման տարեկան միջոցառումները՝ ապահովելով բոլոր ոլորտներում տվյալների հավաքագրումն ու դրանց վերլուծությունը, որն էլ կառավարման բարձր օղակների համար որոշումների կայացման հիմքեր կապահովի:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՈԱ համակարգի մշտադիտարկման և բարելավման համար ստեղծված դրական նախադրյալները, որոնք հետագայում կնպաստեն արդյունքների շարունակական գնահատմանը և որակի գործուն համակարգի լիարժեք ձևավորմանը քոլեջում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը քայլեր է ձեռնարկել որակի ներքին ապահովման համակարգի ներդրման ուղղությամբ, ձևավորվել է որակի ապահովման գործընթացների կանոնակարգման փաստաթղթային հենքը, հատկացնում է մարդկային ռեսուրսներ որակի ապահովման համակարգի գործընթացների իրականացման նպատակով, փորձում է որակի ապահովման գործընթացներում ներգրավել արտաքին և ներքին շահակիցներին, կիրառում է որոշ մեխանիզմներ շահակիցների կարիքների վերհանման նպատակով, պլանավորման հիմքեր են ստեղծվել գործընթացների բարելավման համար, փորձում է ապահովել համակարգի թափանցիկությունը պաշտոնական կայքէջի ու սոցիալական հարթակների միջոցով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

Յասաման Ավագյան
Փորձագիտական խմբի ղեկավար

12-ը նոյեմբերի, 2024 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Յասաման Ավագյան՝ 2001թ.-ին ավարտել է ԱրՊՀ-ի Քիմիա-կենսաբանության ֆակուլտետը, 2003թ.-ին՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան: 2006թ.-ին ավարտել է ասպիրանտուրան: 2003-2004թթ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 3 և 7 միջնակարգ դպրոցներում՝ որպես կենսաբանության ուսուցչուհի: 2010թ. աշխատել է Արցախի գիտական կենտրոնում՝ որպես լաբորանտ: 2013թ. աշխատել է Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանում՝ քիմիայի ամբիոնի դասախոս: Այնուհետև 2017թ. եղել է նույն համալսարանի Քիմիա-կենսաբանության ամբիոնի վարիչ: 2018թ. եղել է համալսարանի ռազմավարական գծով պրոռեկտոր, 2019 թ.՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 2023թ.-ից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետն է:

2018թ. աշխատանքի բարձր արդյունավետության համար ստացել է «Գրիգոր Նարեկացի» համալսարանի պատվոգիր, 2021թ.՝ «Նարեկացի» կրթագիտական մեդալ:

Օլյա Ավետիսյան՝ 2012-2016թթ.-ին սովորել է Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջում՝ Հագուստի մոդելավում և նախագծում մասնագիությամբ, 2016-2019-ին սովորել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում: Մագիստրոսական կրթություն է ստացել նույն համալսարանի «Հոգեբանություն» կրթական ծրագրում: Աշխատել է «Ալեքս Տեքստիլ» ՓԲԸ-ում որպես կոնստրուկտոր, ինչպես նաև «ԳՈԼԴ ՍՍԱՄ» ընկերությունում՝ 3D մոդելավորող: 2018թ-ից մինչ օրս աշխատում է Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջում մասնագիտական առարկաների ամբիոնի դասախոս է:

Լիլիթ Աբելյան՝ 2009 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը: Ստացել է ուսուցչի, մանկավարժության բակալավրի աստիճան՝ «Պատմություն» մասնագիտությամբ: 2017 թ. ավարտել է նույն համալսարանը և ստացել մանկավարժության մագիստրոսի աստիճան՝ «Պատմություն» մասնագիտությամբ: 2016 թ.-ից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոս է: 2020 թ.-ից մինչ այժմ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի պատասխանատուն է:

Ամալյա Ստեփանյան՝ 2023 թ.-ից սովորում է Հայաստանում եվրոպական համալսարանի մարքեթինգ և կառավարում մասնագիտության 2- րդ կուրսում: 2024թ.-ին մասնակցել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	**19.09.2024 թ.**	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում փոխտնօրենների հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	11:30	12:10	40 րոպե
4.	Հանդիպում Ընդհանուր ժողովի անդամների հետ	12:20	13:10	50 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
6.	Հանդիպում շրջանավարտների հետ	14:30	15:20	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	15:30	16:30	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:40	18:30	50 րոպե

N.	**20.09.2024 թ.**			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ			09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ			10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ			11:30	12:20	50 րոպե
4.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ			12:30	13:10	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:20	14:20	60 րոպե
6.	Զուգահեռ հանդիպում «**Հագուստի մոդելավորում**» մասնագիտության կրթական	Զուգահեռ հանդիպում «**Հաշվապահական հաշվառում**» մասնագիտության կրթական	Զուգահեռ հանդիպում «**Սպասարկման կազմակերպում**» մասնագիտության կրթական ծրագրի	14:30	15:20	50 րոպե

	ծրագրի պատասխանատու/ների հետ	ծրագրի պատասխանատու/ների հետ	պատասխանատու/ների հետ			
7.	Զուգահեռ հանդիպում «**Հագուստի մոդելավորում**» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում **«Հաշվապահական հաշվառում»** մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «**Սպասարկման կազմակերպում**» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	15:30	16:20	50 րոպե
8.	Զուգահեռ հանդիպում «**Հագուստի մոդելավորում**» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում **«Հաշվապահական հաշվառում»** մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «**Սպասարկման կազմակերպում**» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	16:30	17:20	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			17:30	19:00	90 րոպե

N.	21.06.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ստորաբաժանումների/կոնտրոնների (ՄՌԿ և ընդհանուր բաժին, Պրակտիկայի, կարիերայի և արտաքին կապերի պատասխանատու, գրադարանավար, հաշվապահ) ղեկավարների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Որակի ապահովման պատասխանատուի հետ	10:40	11:30	50 րոպե
3.	Բաց հանդիպում	11:40	12:20	40 րոպե
4.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:30	13:30	60 րոպե

5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:30	50 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:40	17:30	110 րոպե
7.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Ռազմավարական ծրագրի արդյունավետության գնահատում	1
2.	Ներքին և արտաքին շահակիցների կարիքների գնահատման հիմքեր	1
3.	Ընդհանուր ժողովի նիստերի արձանագրություններ	2
4.	Տնօրենի հաշվետվություններ	2
5.	Նախահաշիվ	2
6.	Բյուջե 2024 թ.	2
7.	Պաշտոնի անձնագրեր	2
8.	Ստորաբաժանումների պլաններ	2
9.	Խորհուրդների նիստերի արձանագրություններ	2
10.	Ամփոփիչ ատեստավորման քննությունների տոմսեր, արձանագրություններ	3
11.	Պրակտիկաների լրացրած օրագրեր/ ընտրված 3 կրթական ծրագրերի համար՝ 4-ական/	3
12.	Ուսումնական խորհրդատուների կազմը, խորհրդատվության թեմաները և հանդիպումների ժամանակացույցը, գրանցումների մատյանը	3
13.	Փոխատեղման կարգ	3
14.	Գործատուների բազա	3
15.	Խորհրդատուների գործունեության կարգ	4
16.	Շրջանավարտների բազա	4
17.	Խորհրդատվությունների պլան	4
18.	Հետազոտական աշխատանքներ՝ ընտրված երեք մասնագիտություններից	4
19.	Ուսխորհրդի նիստերի արձանագրություններ	4
20.	Ամբիոնների հաստիքացուցակը՝ աշխատավարձերով	5
21.	Դասախոսների վերապատրաստումների ժամանակացույց	5
22.	Վերապատրաստման փաթեթներ	5
23.	Ամբիոնի դասախոսների ուսումնամեթոդական աշխատանքների ցանկեր	5

24.	Դասախոսների պորտֆոլիոներ	5
25.	Դասալսումների պլան, արձանագրություններ	5
26.	Ներքին համատեղությամբ աշխատակիցների ցանկ	5
27.	ՈւՕ և վարչական կազմ	5
28.	Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման գործընթացի գնահատման հարցաշար	5
29.	Հաստիքացուցակը՝ աշխատավարձերով	5
30.	Դասախոսների աշխատանքային պայմանագրի օրինակ	5
31.	Ուսումնական գործընթացի գնահատման վերլուծություններ	5
32.	Որակի պատասխանատուի դասալսումների արձանագրություններ , դասալսումների ժամանակացույց	5
33.	Ամբիոնների արձանագրություններ, պլաններ, հաշվետվություններ	5
34.	Մանկավարժական խորհրդի արձանագրություններ	5
35.	Դասախոսական կազմի ցանկ՝ օտարալեզու ուսանողների դասավանդման համար	5
36.	Հետազոտական գործունեության արդյունավետության գնահատում	6
37.	Դիպլոմային աշխատանքների օրինակներ	6
38.	Ռեֆերատների, ինքնուրույն աշխատանքների օրինկաներ	6
39.	Աշխատանքային պլաններ հետազոտական աշխատանքների իրականացման համար	6
40.	Պրակտիկայի հաշվետվություններ, որտեղ առկա է հետազոտության և ուսումնական գործընթացի փոխկապակցում	6
41.	Դասախոսների և ուսանողների կողմից իրականացված հետազոտությունների օրինակներ	6

42.	Ստորաբաժանումների ներկայացրած պահանջագրեր	7
43.	Ռեսուրսների արդյունավետության գնահատում	7
44.	Կայքի դիտելիության տվյալներ	8
45.	Պրակտիկայի վայրերի ցանկ, պայմանագրեր	8
46.	Համագործակցության հուշագրեր, պայմանագրեր	9
47.	Միջազգային վերապատրաստումների հիմքեր	9
48.	Կադրային ռեզերվ	9
49.	Պրակտիկաների լրացված օրագրեր	9
50.	Որակի ապահովման համակարգի կողմից իրականացված գնահատման վերլուծություններ	10
51.	Գործնկերների կողմից ներկայացված հաշվետվություններ	10
52.	Որակի ապահովման հարցաշարեր, լրացված նմուշներ	10
53.	Դիմորդների ներգրավման հիմքեր	10
54.	Որակի ապահովման պլան, հաշվետվություն	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. ստորաբաժանումներ,
3. համակարգչային լսարաններ,
4. համաժողովների դահլիճ,
5. գրադարան-ընթերցասրահ,
6. բուֆետ,
7. արվեստանոց,
8. գրադարան:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՀՈՒ- աշխատանքի վրա հիմնված ուսուցում

ԿԳՄՍ նախարարություն- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒ- Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ- որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ

ՌԾ- ռազմավարական ծրագիր

ՄՄՀ կից բազային քոլեջ- Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջ

ՈՒԽ- ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ-ուսումնաօժանդակ կազմ